

ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԱՐԲԻՏՐԱԺԻ ՄԻՋՈՑՈՎ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ԱՐԲԻՏՐԱԺ» ՀԻՄՆԱՐԿԻ ՕՐԻՆԱԿՈՎ

ՀԵՏԱԶՈՏՈՂՆԵՐ՝
ՓՈՐՁԱԳԵՏ՝

Կ. Պողոսյան, Հ. Բաղալյան, Մ. Մկրտիչյան
Ա. Ավանեսյան



Սույն հետազոտությունը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստանի ամբողջական ֆինանսական օժանդակության շնորհիվ քաղաքականության կրթաթոշակներ նախաձեռնության ծրագրի շրջանակներում, դրամաշնորհ N18584:

Հողվածում տեղ գտած վերլուծություններն արտահայտում են հեղինակների տեսակետը և կարող են չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստանի դիրքորոշումների ու տեսակետների հետ:

This study was made possible through the full support of Open Society Foundations – Armenia’s Policy Fellowship Program Initiative, grant number N18584. Ideas, thoughts, and arguments presented in the paper are the sole expression of the author’s views and do not reflect those of Open Society Assistance Foundations – Armenia.

ՀԵՏԱԶՈՏՈՂՆԵՐ՝

Կարինե Պողոսյան
Հեղինե Բադալյան
Մարիամ Մկրտիչյան

ՓՈՐՁԱԳԵՏ՝

Աիդա Ավանեսյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հապավումների ցանկ.....	5
Սեղմագիր	6
ԳԼՈՒԽ 1. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԲԻՏՐԱԺԸ ՈՐՊԵՍ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ. ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ, ՆՊԱՏԱԿԸ, ՕԳՏՎՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ	7
1.1. ՖԱ-ն որպես ՀԲՄ-ի կողմից սպեղծված ինստիտուցիոնալ արբիտրաժային կենտրոն	9
1.2. Ինստիտուցիոնալ արբիտրաժի հասկացությունը.....	9
ԳԼՈՒԽ 2. ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ	11
2.1. Արբիտրաժային համաձայնագրերը հաճախորդների ֆինանսական ծառայությունների սպառողների պայմանագրերում.....	11
2.2. Տեսական և իրավական շրջանակները	11
2.3. Պարտադիր, պարտավորեցնող արբիտրաժն ալլ երկրներում	13
Ամերիկայի Միացյալ Նահանգներ	13
Եվրոպական Միություն	14
Միացյալ Թագավորություն և Ֆրանսիա	16
2.4. Պարտադիր, պարտավորեցնող արբիտրաժը Հայաստանում	17
ԳԼՈՒԽ 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆ ԵՎ ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՏՐԻԲՈՒՆԱԼԸ ՁԵՎԱՎՈՐԵԼԻՍ	19
3.1. Կողմերի ինքնավարությունը տարբեր ազգային օրենսդրություններում	20
3.2. Արբիտրի նշանակումը	21
Արբիտր նշանակելու ԱՄՊ կանոնները	21
ԱՄՆ փորձը արբիտր նշանակելիս	21
3.3. Կամքի ինքնավարությունը արբիտրաժում	23
ՖԱ-ի արբիտրի ընտրությունը.....	23
ԳԼՈՒԽ 4. ԱՐԲԻՏՐԻ ԱՆԱՁԱՌՈՒԹՅՈՒՆ/ԱՆԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՐՊԵՍ ԱՐԲԻՏՐԱԺԻ ՀԻՄՆԱՐԱՐ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐ	25
4.1. Անաչառությունը միջազգային արբիտրաժային տարբեր կենտրոնների կանոններում և ազգային օրենսդրություններում	26
4.1.1. Անաչառության ձևակերպումը ՖԱ-ի օրինակով	38
4.2. Արբիտրի անկախությունը	32
4.2.1. ՖԱ-ի արբիտրների անկախությունը	33
ԳԼՈՒԽ 5. ՀԱՃԱՆՈՐԴՆԵՐԻ ՀԵՏ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՎ ԱՀ-Ի ՎԻՃԱՐԿՈՒՄԸ	35
Արբիտրաժային համաձայնությունը	35
Միանալու պայմանագրեր	36
ԳԼՈՒԽ 6. ԱՐԲԻՏՐԻՆ ԲԱՑԱՐԿ ՀԱՅՏՆԵԼԸ	38
6.1. Արբիտրին բացարկ հայտնելը ՀՀ օրենսդրության և ՖԱ-ի կանոնների	

շրջանակներում.....	38
ԳԼՈՒԽ 7. ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՏՐԻԲՈՒՆԱԼԻ ՎՃՈՒ ԾԱՆԱԶՈՒՄՆ ՈՒ ԿԱՏԱՐՈՒՄԸ.....	41
7.1. ՀՀ օրենսդրական կարգավորումները	42
ԳԼՈՒԽ 8. ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՏՐԻԲՈՒՆԱԼԻ ՎՃՈՒ ՎԻՃԱՐԿՈՒՄԸ	47
8.1. Վիճարկման ժամկետները	48
8.2. ՀՀ-ում ԱՏ-ի վճռի վիճարկումը	48
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	50
ՀԱՎԵԼՎԱԾ 1. Արբիտրաժային համաձայնության վերաբերյալ էմպիրիկ ուսումնասիրություն.....	52
Հետազոտության մեթոդը	52
Էմպիրիկ արդյունքներ	53
ՀԱՎԵԼՎԱԾ 2. Հարցազրույցների ժամանակ փրվող օրինակելի հարցեր	55
Օգտագործված գրականության ցանկ	58

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱԱԱ	Ամերիկյան արբիտրաժային ասոցիացիա
ԱՀ	Արբիտրաժային համաձայնագիր
ԱՄՊ	Արբիտրաժի միջազգային պալատ
ԱՏ	Արբիտրաժային փոփոխում
ԱՖԱ	ԱՄՆ Արբիտրաժային ֆեդերալ ակտ
ԻԱ	Ինստիտուցիոնալ արբիտրաժ
ԼՄԱԴ	Լոնդոնի միջազգային արբիտրաժային դատարան
ՀԲՄ	Հայաստանի բանկերի միության
ՄԻԵԴ	Մարդու իրավունքների եվրոպական դատարան
ՈՒՆՍԻՏՐԱԼ	ՄԱԿ-ի Միջազգային առևտրային իրավունքի հանձնաժողով
Օրենք	«Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենք
ՖԱ	Ֆինանսական արբիտրաժային դատարան

***Ծանոթագրություն.** Սույն հետազոտությունը կատարվել է միջազգային արբիտրաժային կենտրոնների կանոնների, «Ֆինանսական արբիտրաժ» հիմնարկի Կանոնադրության և Կանոնակարգի, «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի՝ մինչև 2014թ. ապրիլի 30-ը գործող խմբագրության հիման վրա: Եզրակացություններն ու առաջարկները կատարվել են հետազոտության ժամանակահատվածում առկա խնդիրների կապակցությամբ:

ՍԵՂՄԱԳԻՐ

2013 թվականի նոյեմբերից 2014 թվականի ապրիլ ամիսների ընթացքում հետազոտական խմբի կողմից ուսումնասիրվել են Հայաստանի բանկերի միության (այսուհետ՝ ՀԲՄ) «ՀԲՄ Ֆինանսական արբիտրաժային դատարան» հիմնարկի (այսուհետ՝ ՖԱ) առանձնահատկությունները միջազգային փորձի համադրությամբ նպատակ ունենալով նպաստել Հայաստանում արբիտրաժի կայացմանը միջազգային չափանիշներին համապատասխան:

Հետազոտության խնդիրներն են՝

- ա) ներկայացնել՝ ՖԱ-ի ստեղծման նպատակը և նրա ծառայությունից օգտվող սուբյեկտների շրջանակը,
- բ) ուսումնասիրել «արբիտրաժ» հասկացությունը և դրա հիմնական հատկությունները համընդհանուր ճանաչում ձեռք բերած արբիտրաժային կենտրոնների կանոնների և պրակտիկայի համադրությամբ,
- գ) համեմատել ՖԱ-ի առանձնահատկությունները միջազգային պրակտիկայում ընդունված «արբիտրաժի» սկզբունքների և հատկանիշների հետ, մասնավորապես՝ որքանով և ինչպես է կողմերի ազատության իրավունքն արտահայտված ՖԱ-ի կանոնակարգում և պրակտիկայում,
- դ) քննարկել, թե Հայաստանում ինչպես են բանկային ծառայությունների սպառողները (հաճախորդները) վեճը ՖԱ-ի քննությանը հանձնելու վերաբերյալ պայմանագրային հարաբերությունների մեջ մտնում իրենց կամքից անկախ,
- ե) արբիտրաժային համաձայնագրի (այսուհետ՝ ԱՀ) վիճարկման, արբիտրին բացարկ հայտնելու վերաբերյալ հիմնահարցերը,
- զ) ուսումնասիրել արբիտրաժային փրիբունալի (այսուհետ՝ ԱՏ) վճիռների ճանաչման և կատարման իրավական խնդիրները և վիճարկման առանձնահատկությունները:

Հետազոտության արդյունքների հիման վրա կառաջարկվեն վերհանված խնդիրների հնարավոր լուծումներ:

ԳԼՈՒԽ 1

ՖԱ-Ն ՈՐՊԵՍ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ. ՆԱԽԱՊԱՏՍՈՒԹՅՈՒՆԸ, ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՕԳՏՎՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ

Արբիտրաժը, որի նպատակն արդարության հասնելն է¹ ոչ ավանդական՝ արտադարական ճանապարհով, «ՀՀ-ում գտնվում է սաղմնային փուլում», և գրեթե չի ուսումնասիրվել:²

ՀՀ Սահմանադրության³ 18-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի օրենքով չարգելված եղանակով պաշտպանելու իր իրավունքները: Իրավական պրակտիկայում արբիտրաժն իրավունքների պաշտպանության արդյունավետ միջոցներից մեկն է: Արբիտրաժը, որի վայրը Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) տարածքում է, կարգավորվում է «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք):⁴ Այն, առանց հստակեցնելու «արբիտրաժի» ելությունը և սահմանելու արբիտրաժային հաստատության կողմից կամ առանց նման հաստատության իրականացվող արբիտրաժի տարբերությունը,⁵ կիրառում է «արբիտրաժային տրիբունալ» եզրույթը:⁶ 2010թ.-ից գործում է ՀԲՄ-ի հիմնած ինստիտուցիոնալ արբիտրաժի (այսուհետ՝ ԻԱ) կենտրոնը՝ ՖԱ-ն, որի նախնական նպատակը եղել է ֆինանսական վեճերն⁷ անկախ արբիտրաժի միջոցով որակյալ և արագ լուծելը, դատարաններին այլընտրանքային մարմին լինելն,⁸ ինչպես նաև ֆինանսական ձգնաժամի տարիներին բանկերին աջակցելը վերադարձնելու վարկային պարտավորություններով վճարումները:⁹

ՖԱ-ի իրավասությանը ենթակա են առևտրային հարաբերություններից բխող այն վեճերը, որոնց լուծումը կողմերը վերապահել են ՖԱ-ին՝ այդ մասին կնքելով արբիտրաժային համաձայնություն (այսուհետ՝ ԱՀ):¹⁰ Այն կարող է ներառվել պայմանագրերում կամ կնքվել առանձին փաստաթղթի ձևով: Ներկայումս ՖԱ-ի ծառայություններից առավել հաճախ օգտվում են ՀՀ-ում

¹ Shahal F. Ali, *Consumer Financial Dispute Resolution in a Comparative Content*. Cambridge University Press 2013. Pages 190-192,196.

² Zaven A. Sargsyan, *A Practical Guide to International Commercial Arbitration in the Post-Soviet States: Republic of Armenia*. JEL 2012 Vol. 5, No. 3, August 2013.

³ ՀՀ Սահմանադրություն (փոփոխություններով), ընդունվել է 27 նոյեմբերի 2005

⁴ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենք, ՀՀ Ազգային ժողով. 25.12.2006. N ՀՕ-55-Ն ՀՀՊՏ 2007.01.31/8(532) Հոդ.156

⁵ Նույն տեղում, հոդված 2, կետ 1. չնայած այն չի տարանջատում *ad hoc* և ինստիտուցիոնալ արբիտրաժները, այլ տալիս է ընդհանուր կարգավորումներ:

⁶ Նույն տեղում, հոդված 2, կետ 2

⁷ Ըստ ՖԱ-ի Կանոնադրության 2-րդ կետի՝ ՖԱ-ն կարող է քննել նաև առևտրային հարաբերություններից ծագող վեճեր:

⁸ ՖԱ-ի նախագահի հետ հարցազրույց:

⁹ Նույն տեղում

¹⁰ ՖԱ-ի Կանոնադրություն, կետ 2.1.

գործող բանկերը¹¹ («Արդշինհիմվեստբանկ»-ը, «Զարգացման Հայկական Բանկ - Արմենիա»-ն, «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ»-ը, «Հայէկոնոմբանկ»-ը, «ՎՏԲ-Հայաստան բանկ» և «Ինեկոբանկ»-ը) և վարկային կազմակերպությունները¹² («Ֆարմ Կրեդիտ Արմենիա»-ն, «ՓՄՁ ներդրումներ» ՈւՎԿ-ն): Վերջինները, կարևորելով ՖԱ-ի՝ որպես ՀՀ-ում գործող դափական համակարգի այլընտրանք, վարկային, գրավի և այլ պայմանագրերում կատարել են փոփոխություններ՝ ներառելով արբիտրաժային վերապահում պայմանագրերի կապակցությամբ ծագած բոլոր վեճերը ՖԱ-ին հանձնելու վերաբերյալ: «Անելիքբանկ», «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան», «Կոնվերսբանկ», «Համահայկական բանկ», «Պրոկրոդիտբանկ»-ը առայժմ չեն օգտվում ՖԱ-ի ծառայություններից:¹³ «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ», «Առեկսիմբանկ – Գազպրոմբանկի խումբ», «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ», «Բիբլոս Բանկ Արմենիա», «Մեյլաթ Բանկ», «Յոնիբանկ», «Պրոմեթեյ Բանկ» և «ՀԱՅԲԻՋՆԵՍԲԱՆԿ» մեր հարցմանը չեն պատասխանել: «ԲՏԱ Բանկ» և «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ- ները հրաժարվել են հարցմանը պատասխանելուց՝ պարձառաբանելով, որ պահանջվող տեղեկատվությունը առկայային գաղտնիք է:

Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից պայմանագրերում ներառվող ԱՀ-ները համապատասխանում են ՖԱ-ի կայքում տեղադրված տրիպային օրինակներին:

Քանի որ ՖԱ-ն նոր ձևավորված մարմին է, այն չունի օտարերկրյա պետությունների ազգային և միջազգային առևտրային հայտնի կենտրոնների տարիների փորձը: Բացի այդ, ՖԱ-ի և միջազգային առևտրային արբիտրաժային կենտրոնների նպատակների միջև ընդհանրություն կա: Այդ պարձառով այս աշխատության շրջանակներում ուսումնասիրվել են միջազգային առևտրային արբիտրաժի հիմնական սկզբունքները և զուգահեռ անցկացվել ազգային և միջազգային արբիտրաժային կենտրոնների միջև: Մասնավորապես, ՖԱ-ի կանոնները համեմատվել են Առևտրի միջազգային պալատի (այսուհետ՝ ԱՄՊ), Լոնդոնի միջազգային արբիտրաժային դատարանի (այսուհետ՝ ԼՄԱԴ) և ՄԱԿ-ի միջազգային առևտրային իրավունքի հանձնաժողովի հաստատած (այսուհետ՝ ՈՒՆՍԻՏՐԱԼ) կանոնների հետ:

Միջազգային այս կանոններն ընտրվել են՝ հաշվի առնելով դրանց՝ վիճող կողմերի կողմից լայն կիրառությունը, ինչպես նաև տարբեր մեկնաբանների կողմից խորը ուսումնասիրությունները: Այնուհետև առանձնացվել է միջազգային արբիտրաժային լավագույն փորձի կանոնների խումբ, որը հնարավոր է կիրառել ՖԱ-ում:

¹¹ ՀՀ տարածքում գործող բանկեր. Տես՝ <https://www.cba.am/am/SitePages/fscfobanks.aspx>

¹² ՀՀ տարածքում գործող բանկեր և վարկային կազմակերպություններ.

Հասանելի է <https://www.cba.am/am/SitePages/fscfocreditorganizations.aspx/> Հղումը կատարվել է 16 դեկտեմբերի 2013

¹³ Սա պայմանավորված է այն հանգամանքներով, որ (ա) Արբիտրաժային համաձայնության կնքման և վեճն արբիտրաժային դատարանում լուծելու պրակտիկական համեմատաբար վերջերս է ներդրվել բանկում, (բ) նախընտրում են դիմել դափական պաշտպանության համարելով առավել արդյունավետ և ժամանակի տեսանկյունից՝ ավելի հարմար, (գ) գործերի քանակը շատ չէ, սակայն ապագայում նախատեսվում է օգտվել ՖԱ-ի ծառայություններից:

Հաշվի առնելով, որ ՖԱ-ն հիմնադրվել է ՀՀ-ում ՀՀ Սահմանադրության¹⁴ դրույթներին համապատասխան դրա վրա տարածվում են նաև Մարդու իրավունքների եվրոպական դափարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) պահանջները:¹⁵

1.1. ՖԱ-ն որպես ՀԲՄ-ի կողմից ստեղծված ինստիտուցիոնալ արբիտրաժային կենտրոն¹⁶

Ելնելով ՖԱ-ի նպատակից¹⁷ հիմնադիրներն ընտրել են ՖԱ-ի կազմակերպատիրավական տեսակը՝ հիմնարկ: Ըստ ՖԱ-ի նախագահի՝ ստեղծվելով ֆինանսական ճգնաժամի տարիներին՝ ՖԱ-ն փորձում էր օգնել վիճող կողմերին խնայել գումարները և ժամանակը:¹⁸ Ըստ նրա՝ վիճող կողմերը, դիմելով ՖԱ-ին, կարող էին նվազեցնել այն ծախսերը, որոնք կպահանջվեին մի քանի դատական ատյաններում վեճը լուծելու համար:

Մյուս հանգամանքը, որը դրվել է ՖԱ-ի ստեղծման հիմքում, դափարանի հետ համեմատած՝ կողմերին առավել մասնագիտացված ծառայություն մատուցելն է:¹⁹

ՖԱ-ի կանոնները սինթեզում են տարբեր միջազգային կենտրոնների կանոնները:²⁰

Ստորև կքննարկվի այն հարցը՝ արդյոք ՀԲՄ-ի (հիմնադրված ֆինանսական հաստատությունների կողմից) ստեղծած, առևտրային շահ չհետապնդող հիմնարկը կարող է անկախ լինել իր հիմնադիրների կամքից վերջինների դեմ ներկայացրած վեճերը լուծելիս:

1.2. Ինստիտուցիոնալ արբիտրաժի հասկացությունը

Արբիտրաժը, ներառյալ միջազգային առևտրայինը, կարող է լինել երկու տեսակի՝ *ad hoc* կամ ինստիտուցիոնալ: Քանի որ այս հետազոտության

¹⁴ ՀՀ Սահմանադրություն, Հոդված 6. ՀՀ միջազգային պայմանագրերի դրույթների գերակայությունը ՀՀ օրենքների նորմերի կարմամբ:

¹⁵ Չնայած ՖԱ-ն գործում է մասնավոր իրավունքի շրջանակներում, նրա գործողություններն առնչվում են կողմերի իրավունքներին, ուստի այդ իրավունքների հնարավոր խախտումները կհանգեցնեն նաև հանրային իրավունքի ոլորտի խախտումների: ՖԱ-ի շահերից է բխում գործել ՀՀ միջազգային պայմանագրերին համապատասխան, մասնավորապես ՄԻԵԿ-ին, քանզի լայն իմաստով դրանց չպահպանելը կարող է վեճը հասցնել մինչև ՄԻԵԴ, ինչն անուղղակի կերպով կվնասի ՖԱ-ի հեղինակությանը:

¹⁶ ՖԱ-ն բանկերի և հաճախորդների միջև ծագած ֆինանսական վեճեր լուծող արբիտրաժային կենտրոն է: Այն ունի իր Կանոնադրությունը և Կանոնակարգը, որոնց համաձայն ստեղծվել է ՖԱ հիմնարկը: Հասանելի է <http://uba.am/arbitration/?pageid=208/> Հղումը կատարվել է 27 դեկտեմբերի 2013

¹⁷ ՖԱ-ի նախագահի հետ հարցազրույց. «ՖԱ-ն շահույթ ստանալու նպատակ չի հետապնդում»:

¹⁸ Նույն տեղում

¹⁹ Նույն տեղում

²⁰ Օրինակ՝ ԼՍԱԴ-ի պես ՖԱ-ն ևս ունի արբիտրների ցանկ, որից էլ վիճող կողմերը պետք է ընտրեն արբիտր: Սակայն, ըստ ԼՍԱԴ-ի կանոնների՝ կողմերն իրավունք ունեն ընտրելու ցանկացած անձի որպես արբիտր, իսկ ԼՍԱԴ-ն իրավունք ունի քննելու և որոշելու՝ արդյոք ընտրված թեկնածուն համապատասխանում է պահանջվող չափանիշներին: Հասանելի է http://www.lcia.org/Dispute_Resolution_Services/LCIA_Arbitration_Rules.aspx#article7/ Հղումը կատարվել է 10 հունվարի 2014:

առարկան՝ ՖԱ-ն, ինստիտուցիոնալ է, կներկայացվի ինստիտուցիոնալ արբիտրաժի (այսուհետ՝ ԻԱ) առանձնահատկությունները, այդ թվում կանոնները և փորձը:

ԻԱ-ն առավելապես ընկալվում է որպես միջազգային մասնավոր առևտրային հարաբերությունների ոլորտում ծագած վեճերի լուծման մեխանիզմ: ԻԱ-ի արդունավետությունը, ժամանակ խնայելու հատկությունը,²¹ վեճերի նկատմամբ արբիտրների մասնագիտացված մոտեցումները ընդարձակել են ԻԱ-ի սկզբունքների կիրառությունը՝ ներառելով ոչ միայն օտարերկրյա փարրով հարաբերություններն, այլև ներպետական վեճերը: Այսպիսով, ներպետական վեճերի լուծման համար ԻԱ կենտրոններ ձևավորելու անհրաժեշտությունը հանգեցրեց բազմաթիվ ազգային կամ փարածաշրջանային ԻԱ-ի կենտրոնների ստեղծմանը:²²

Նմանափայ կենտրոններն ունեն արբիտրաժային վարույթների իրականացման հատուկ կանոններ: Ինչպես բացարժեղ են Դ. Ջուլիանը և մյուսները, այդ կանոններին լավատեսյակ լինելը կարևոր է, քանզի կողմերի՝ այդ կենտրոնների գիտակցված ընտրությունը հանգեցնելու է վերջինների կանոնների կիրառմանը:²³ Հեղինակները գտնում են, որ ԻԱ-ն ունի բազմաթիվ առավելություններ՝ նախևառաջ կարևորելով ինստիտուցիոնալ բնույթը,²⁴ կենտրոնի կողմից քննված գործերի բազմազանությունը²⁵ և արբիտրների վարձավարության մեխանիզմը:²⁶

²¹ Leigh Duthie, Alex Wolff, Mia Livingstone, Australian Arbitral Institutions, *The Baker & McKenzie International Arbitration Yearbook 2012-2013*. Juris, p. 21

²² Ամերիկյան արբիտրաժային ասոցիացիան, ԼՄԱԴ, Կահիրեի ինստիտուցիոնալ առևտրային արբիտրաժի փարածաշրջանային կենտրոնը:

²³ Julian D. M. Lew, Loukas A. Mistelis, Stefan Kröll, *Comparative International Commercial Arbitration*, Kluwer Law International 2003. Հասանելի է http://books.google.am/books?id=b1OgnDQ2UnwC&printsec=frontcover&dq=arbitration+and+trade+law&hl=en&sa=X&ei=ZSSfUr3sCuzbygPK9YGwDg&redir_esc=y#v=onepage&q=arbitration%20and%20trade%20law&f=false/ Հղումը կատարվել է 13/01/ 2014: Հեղինակները կարծում են, որ այն դեպքում, երբ կողմերի միջև կնքված պայմանագիրը չի կարգավորում արբիտրաժին վերաբերող որոշակի կանոններ, ապա ԻԱ կենտրոն ընտրելիս կգործի այդ կենտրոնի կանոնը փվյալ հարցի առնչությամբ՝ բացառելով կողմերի հետագա համաձայնությունն այլ կանոնների շուրջ: Մասնավորապես, եթե կողմերը պայմանագրում չեն սահմանել արբիտրների թիվը, բայց ընտրել են ԼՄԱԴ որպես վեճը լուծող կենտրոն, ապա վեճ ծագելու դեպքում վեճը կլսվի միանձնյա արբիտրի կազմով (3-18 և 3-19 պարբերություններ):

²⁴ Այն պետություններում, որտեղ դատական համակարգին այնքան էլ չեն վստահում, ԻԱ կենտրոններն իրենց փորձառու արբիտրներով ձեռք են բերում վստահություն: Հանրությունն ընկալում է այդպիսի կենտրոնները որպես անկախ, գիտակ մասնագետներով հարուստ այլընտրանք դատական համակարգին:

²⁵ Չնայած գործերը քննվում են ոչ թե կենտրոնի, այլ անհատ արբիտրների կողմից, գործերի քանակը հուշում է, որ այդպիսի կենտրոնները հարուստ փորձ ունեն:

²⁶ Քանի որ կողմերը վճարում են կենտրոններին, այլ ոչ թե անմիջապես արբիտրներին, վերջիններս կարող են չքննարկել այդ հարցերը կողմերի հետ, ինչը դարձնում է նրանց անկախ:

ԳԼՈՒԽ 2

ԱՐՔԻՏՐԱԺԱՅԻՆ ՀԱՍԱՉԱՅՆՈՒԹՅՈՒՆ

2.1. Արբիտրաժային համաձայնագրերը ֆինանսական կազմակերպությունների և հաճախորդների միջև կնքվող պայմանագրերում

ՖԱ-ի իրավասությանը ենթակա են առևտրային հարաբերություններից բխող այն վեճերը, որոնց լուծումը կողմերը վերապահել են ՖԱ-ին՝ այդ մասին կնքելով ԱՀ:²⁷ ԱՀ-ն կարող է ներառվել պայմանագրերում կամ կնքվել առանձին փաստաթղթի ձևով: Ներկայումս ՖԱ-ի ծառայություններից առավել հաճախ օգտվում են ՀՀ-ում գործող բանկերը և վարկային կազմակերպությունները: Այս պայմաններում հաճախորդը՝ բանկային ծառայությունների սպառողը,²⁸ չի կարող վճարային քարտ, բանկային հաշիվ կամ վարկ ստանալ առանց համաձայնվելու վեճը ՖԱ-ի քննությանը հանձնելու վերաբերյալ նախապես կազմված արբիտրաժային վերապահման հետ, որն առաջարկվում է «համաձայնվիր կամ հեռացիր» սկզբունքով, և հաճախորդը չունի բանակցելու բավարար հնարավորություն ստանդարտ ձև ունեցող պայմանագրերում փոփոխություններ կատարելու համար:²⁹ Չնայած որ արբիտրաժային ճանապարհով վեճը լուծելու պայմանները մեծ մասամբ պարզաբանվում են հաճախորդներին պայմանագիրը կնքելիս, բանկերի քիչ հաճախորդներ են բավարար կերպով հասկանում ԱՀ-ից ծագող պարտավորությունները և իրավական հետևանքները, որոնց իրենք համաձայնել են: Ընկերությունների կողմից հաճախորդներին, աշխատակիցներին, սպառողներին և այլուց ներկայացրած պայմանագրերում արբիտրաժային դրույթների առկայությունը առաջացրել է եական բանավեճ և հրահրել է բազմաթիվ մեկնաբանություններ, որոնք կամփոփվեն ստորև:³⁰

2.2. Տեսական և իրավական շրջանակները

Այս հոդվածում մենք օգտագործելու ենք «պարտադիր, պարտավորեցնող արբիտրաժ» եզրույթը: Թյուր մեկնաբանություններից խուսափելու նկատառումով անհրաժեշտ ենք համարում սահմանել այդ հասկացությունը:

Արբիտրաժը կարող է լինել «պարտավորեցնող» կամ «ոչ

²⁷ ՖԱ-ի Կանոնադրություն, կետ 2.1.

²⁸ Բացառապես անձնական, ընտանեկան, տնային կամ այլ օգտագործման համար նախատեսված, ձեռնարկատիրական գործունեության հետ չկապված, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) պատվիրման կամ ձեռքբերման նպատակով կրեդիտ ստացող քաղաքացի. Տես ՀՀ օրենքը «Սպառողական կրեդիտավորման մասին», ընդունված է 17 հունիսի 2008թ.

²⁹ Cillins, D. A. (2008). Compulsory Arbitration Clauses in Domestic and International Consumer Contracts. King's Law Journal, 19(2), pp. 335-355.

³⁰ Folberg, J., Golann, D., Stipanowich, T.J., Kloppenberg, L. A. (2010). *Resolving Disputes. Theory, Practice, and Law* (pp.561-581), New York: Aspen Publishers

պարտավորեցնող»:³¹ «Ոչ պարտավորեցնող» արբիտրաժում վճիռը կարող է ուժի մեջ մտնել, միայն եթե կողմերը համաձայնել են վճռին դրան ծանոթանալուց հետո:

«Պարտավորեցնող» արբիտրաժի դեպքում կողմերը նախօրոք համաձայնվում են կատարել արբիտրաժի վճիռը՝ անկախ վճռի բովանդակությունից:³² Առկա է արբիտրաժի մեկ այլ տարանջատում՝ սա՝ «պարտադիր» և «կամավոր»: «Պարտադիր արբիտրաժում» պայմանագրերը պարունակում են դրույթներ, ըստ որոնց պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո արբիտրաժը վեճերի լուծման բացառիկ միջոց է. եթե վեճ է առաջանում, հայցվորը կարող է դիմել միայն արբիտրաժ: «Կամավոր արբիտրաժի» դեպքում հայցվոր կողմն ունի երկընտրանք՝ դիմել դատարան կամ արբիտրաժ³³ երկուսի ծախսերն ու առավելությունները կշռադատելուց հետո:

«Պարտադիր, պարտավորեցնող արբիտրաժն» առանձնահատուկ ուշադրության է արժանացել մեր կողմից. վեճերի «հաճախորդ-ծառայություն մատուցող» համատեքստում, պարտադիր, պարտավորեցնող արբիտրաժային վերապահումը պայմանագրում ներառվող դրույթ է, որը երկու կողմերին (ծառայություն մատուցող և սպառող) պարտավորեցնում է հետագայում պայմանագրից ծագող վեճերը լուծել արբիտրաժի միջոցով:³⁴ Այսպիսի դրույթները մշակվում են ծառայությունը մատուցողի կողմից նախքան պայմանագիր կնքելը՝ առանց հաճախորդին որևէ հնարավորություն տալու ազդելու պայմանագրի էության վրա:³⁵ Կողմերը, ստորագրելով այսպիսի պայմանագրեր, պարտավորվում են հետագա անհամաձայնությունները լուծելու համար դիմել արբիտրաժ: ԱՏ-ի վճիռը վերջնական է:

Այն պարճառով, որ պարտադիր, պարտավորեցնող արբիտրաժային վճիռը վերջնական է, այն վեճերի լուծման համար կարող է վստահելի միջոց լինել միայն, եթե կողմերը համաձայնության են գալիս գիտակցաբար: Նրանք պետք է իմանան և հասկանան պարտադիր, պարտավորեցնող արբիտրաժին համաձայնելու հետևանքները և կամովին ընտրեն իրենց՝ դատական պաշտպանությանը դիմելու սահմանադրական իրավունքից հրաժարվելու ճանապարհը: Այսպիսով, երբ կողմերից մեկը չի հասկանում այս հետևանքները կամ չունի վեճերի լուծման պայմանները բանակցելու հնարավորություն, առաջանում է պարտադիր, պարտավորեցնող ԱՀ-ի վավերականության հարցը: Մասնավորապես, նախավեճային ԱՀ-ի ոչ կոնսենսուալ բնույթը այդպիսի համաձայնությունը դարձնում է «անարդար գործարք»:

³¹Deborah R. Hensler, (1990) Court-ordered arbitration: an alternative view, Rand Corporation

³² Senator Russel D. Feingold (2002) Policy Essay. Mandatory Arbitration: What Process Is Due? Harvard Journal on Legislation, Vol. 39, pp. 281-298

³³ Նույն տեղում

³⁴ Prepared by the Public Interest Advocacy Centre (PIAC) and Option Consommateurs (Nov. 2004). Հասանելի է <http://www.option-consommateurs.org/> Հղումը կատարվել է 03 մարտի 2014թ.

³⁵Նույն տեղում

2.3. Պարտադիր, պարտավորեցնող արբիտրաժն ալ երկրներում

Ամերիկայի Միացյալ Նահանգներ (ԱՄՆ). ԱՄՆ-ում ԱՀ-ն սպառողական պայմանագրերում լայն կիրառություն է ստացել: Ոլորտում լայն փորձ ունեցող ամերիկյան գիտնականի եզրակացմամբ «չկա ԱՄՆ-ի սահմաններից դուրս պարտադիր մասնավոր ԱՀ-ի կիրառման մասին վկայություն»:³⁶ ԱՄՆ-ի ֆեդերալ արբիտրաժային օրենսդրությունը կարևոր հիմք է հանդիսանում ամերիկյան ընկերությունների կողմից ԱՀ-ին նախապատվություն փալու համար: Ամերիկյան դատարանները արբիտրաժային դրույթները սպառողական պայմանագրերում կիրառելիս³⁷ հիմք են ընդունել Արբիտրաժային ֆեդերալ օրենքի (այսուհետ՝ ԱՄՆ ԱՖՕ) 9-րդ հոդվածը:³⁸ Այն ընդունվել է 1925թ.՝ ի պատասխան ամերիկյան դատարանների անպարաստականությանը կիրառել առևտրային ԱՀ-ներ: Մինչ վերջերս այն կիրառվում էր միայն գործարար հարաբերություններից ծագած վեճերի դեպքում, ոչ թե ընկերություն-սպառող պայմանագրերում:³⁹

1953 և 1974 թթ. երկու կարևոր որոշումներում ԱՄՆ Գերագույն դատարանը վճռեց, որ նախավեճային ԱՀ-ները չեն կարող կիրառվել «ընկերություն – ապառող» կամ «ընկերություն – աշխատակից» պայմանագրերում:⁴⁰ 1980-ականներին, սակայն, Գերագույն դատարանը փոխեց իր դիրքորոշումը մի քանի որոշումներում՝ պաշտպանելով արբիտրաժի կիրառելիությունը նման հարաբերություններում և մերժելով հանրային քաղաքականության վերաբերյալ հայցապնդումները, որ որոշակի կարեգործիաների դեպքերը ենթակա չեն արբիտրաժային քննությանը:⁴¹ 1995թ.-ին *Ըլայդ Բոյուս Թերմինիքս Քամփընիզ ընդդեմ Դոբսոնի* գործում Գերագույն դատարանը հաստատեց պարտադիր ԱՀ-ի իրավական ուժն սպառողական պայմանագրում: Այս գործում Դատարանը նաև հայտարարեց, որ ԱՄՆ ԱՖՕ-ն արդյունավետորեն սահմանափակում է բոլոր նահանգային օրենքները, որոնք չեն խրախուսում արբիտրաժը: Սա արդյունավետ կերպով սահմանափակում է նահանգային օրենսդրությունը այնպիսի վեճերով, որոնք չեն ներառում միջնահանգային առևտուրը: Գերագույն դատարանի գերիշխող կարծիքն այն է, վեճերի լուծման նպատակով արբիտրաժին բոլոր դիմողները շահում են:⁴²

Չնայած պարտադիր, պարտավորեցնող սպառողական արբիտրաժի խիստ

³⁶ Sternlight, *supra*, note 7 at 831.

³⁷ Նույն տեղում, էջ 38

³⁸ Article 9 of the Federal Arbitration Act (FAA) states: “A written provision in any maritime transaction or a contract evidencing a transaction involving commerce to settle by arbitration a controversy thereafter arising out of such contract or transaction, or the refusal to perform the whole or any part thereof, or an agreement in writing to submit to arbitration an existing controversy arising out of such a contract, transaction, or refusal, shall be valid, irrevocable, and enforceable, save upon such grounds as exist at law or in equity for the revocation of any contract.”

³⁹ Sternlight, *supra* note 7 at 832.

⁴⁰ *Wilko v. Swan* 346 U.S. 427 (1953) cited in (PIAC) and Option Consommateurs (2004), page 38.

⁴¹ (PIAC) and Option Consommateurs (2004).

⁴² Haris, 183 F.3d at 173

քննադատությանը⁴³ չկա ֆեդերալ օրենսդրություն, որն արգելելում է դրա կիրառությունը, ինչը նշանակում է, որ դատարանները վերահսկում են հաճախորդների պայմանագրերի արբիտրաժային դրույթների արդարությունը յուրաքանչյուր գործ քննելու ժամանակ:

Եվրոպական Միություն (ԵՄ). Սպառողական պայմանագրերում ԱՀ-ն և սպառողների պաշտպանության վերաբերյալ ԵՄ դիրքորոշումը կարևոր է, քանի որ այն ընդհանուր է Միության մակարդակով:

Սպառողական պայմանագրերին վերաբերող եվրոպական օրենքի վերլուծությունից կարող ենք եզրակացնել, որ Եվրոպայում պարտադիր սպառողական արբիտրաժային համաձայնագրերը խստորեն արգելված են,⁴⁴ և ընկերությունները չեն կարող պարտադրաբար կիրառել պարտադիր արբիտրաժը, դատական կարգով վեճի քննության փոխարեն:

ԵՄ «Սպառողների պայմանագրերում անարդար պայմանների մասին» 1993 թ.-ի դիրեկտիվը⁴⁵ (այսուհետ՝ Դիրեկտիվը) պահանջում է անդամ երկրներին ընդունել օրենքներ, որոնք անվավեր են ճանաչում սպառողական պայմանագրի յուրաքանչյուր պայման, որ կհամարվի անարդար: Անարդար դրույթները սահմանվում են որպես պայմանագրային դրույթ, որն առանձին չի բանակցվել, եթե ի տարբերություն բարեխղճության պայմանի՝ այն առաջացնում է կողմերի պայմանագրից բխող իրավունքների ու պարտականությունների էական անհավասարություն՝ ի վնաս սպառողի:

Դիրեկտիվին կցված անարդար դրույթների հստակ օրինակները ներառում են պարտադիր արբիտրաժը: Նախավեճային արբիտրաժային դրույթն, որն առանձին չի բանակցվել, համարվում է անվավեր:⁴⁶

Գրավոր պայմանագրերի բոլոր դրույթները պետք է գրված լինեն հստակ, հասկանալի լեզվով:⁴⁷ Եթե դրույթի մեկնաբանության մեջ առկա է տարակարծություն, ապա նախապատվությունը տրվում է սպառողի համար առավել բարենպաստ մեկնաբանությանը:⁴⁸

Այսպիսի պայմանագրերի կատարման հարցը որոշելիս դատարանը պետք է հաշվի առնի այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են «պայմանագրի առարկայի բնույթը, հանգամանքները, որ հանգեցրել են պայմանագրի կնքմանը և

⁴³ "In recent years, academics, media commentators and consumer advocates have questioned the use of pre-dispute arbitration clauses in consumer agreements, which result in class action waivers, inconvenient venue selection, cost-shifting provisions, and process limitations being forced on parties with inferior bargaining power. Concerns about such disparities were echoed by other participants who noted the prevalence of perceptions that 'large institutions have "repeat-user" advantage". - read more in Shahla F. Ali "Consumer Financial Dispute Resolution in a Comparative Context. Principles, Systems and Practice" (2013), Cambridge University Press, New York

⁴⁴ David Collins, Compulsory Arbitration Agreements in Domestic and International Consumer Contracts, 19 K.L.J. 335 No.2 (2008)

⁴⁵ http://old.eurlex.europa.eu/smartapi/cgi/sga_doc?smartapi!celexapi!prod!CELEXnumdoc&lg=EN&numdoc=31993L0013&model=guichett/ Հղումը կատարվել է 03/03/2014

⁴⁶ Նույն տեղում, էջ 845 (quoting Council Directive 93/13, Annex (1)(q), 1993 O.J. (L 95) 29).

⁴⁷ Overby, *Institutional Analysis*, supra note 42, at 1266-67 (citing 1993 O.J. (L95) 29, art. 5).

⁴⁸ Նույն տեղում

պայմանագրի մյուս բոլոր դրույթները»:⁴⁹

Եթե հայտնաբերվում է անհավասարություն, դատարանը պետք է որոշի՝ արդյոք այն չի հակասում բարեխղճության սկզբունքին:⁵⁰ Վերջինս գնահատվում է հետևյալ սկզբունքների հաշվառմամբ. ա) «կողմերի բանակցելու հնարավորությունը», բ) «արբիտրաժային վերապահման վերաբերյալ համաձայնությունն ապահովելու նպատակով սպառողի նկատմամբ իրականացրած ցանկացած դրդում... » և գ) «ծառայություն մատուցողի կամ վաճառողի կողմից սպառողին արդարացիորեն վերաբերվելու չափը»:⁵¹

Ակնհայտ անարդար դրույթ է այն դրույթը, որը բացառում կամ խոչնդդում է սպառողի՝ դատարան դիմելու իրավունքը:⁵² Դիրեկտիվն ակնհայտորեն լիազորում է դատարանին անվավեր ճանաչել պայմանագրի յուրաքանչյուր պայման, որն այն կհամարի անարդար սպառողի նկատմամբ:⁵³

Սպառողը կարող է դատարան դիմելիս վկայակոչել Դիրեկտիվը, բայց վերջինս նաև լիազորում է *Արդար առևտրի գրասենյակի* գլխավոր փնտրենին ընդհանուր կիրառման մեջ անարդար դրույթների շարունակական ներառումը կասեցնելու համար ընդունել կարգադրություններ:⁵⁴ Այս լիազորությունը փարածվում է նաև այլ իրավասու մարմինների վրա և թույլ է տալիս նրանց վերահսկել ընկերությունների կողմից կնքվող այսպիսի պայմանագրերի կնքումը:⁵⁵

Հիմնվելով այս Դիրեկտիվին հետևող փարբեր գործողությունների վրա՝ ստացվում է, որ ԵՄ-ն արդյունավետորեն արգելել է պարտադիր արբիտրաժը: 1998թ. Եվրոպական հանձնաժողովը⁵⁶ փվել է Հանձնարարական,⁵⁷ որին հաջորդեցին Դիրեկտիվի իրականացման մասին զեկուլյցների շարքը:

Հանձնարարականով սահմանվում է, որ «դատարանի այլընտրանքները չեն կարող հաճախորդներին զրկել իրենց դատարան դիմելու իրավունքից, եթե նրանք ակնհայտորեն չեն համաձայնել դրան՝ լավատեղյակ լինելով փաստերին, և վեճը նյութականանալուց հետո միայն»:⁵⁸ Սա շար խիստ ձևակերպում է. ակնհայտորեն նրանք չեն հավատում, որ այս պայմանագրերն էապես արդար են սպառողի նկատմամբ, և սա, ըստ էության, ԵՄ-ում այդպիսի պայմանագրերի դեմ

⁴⁹ Sternlight, *U.S. Out on a Limb*, *supra* note 4, at 845 (quoting 1993 O.J. (L95) 29, art. 4(1)).

⁵⁰ Նույն փեղում. (citing art. 3(1))

⁵¹ Նույն փեղում (quoting Consumer Protection, 1994, S.I. 1994/3159, art. 4(3) & schedule 2 (U.K.))

⁵² Նույն փեղում, էջ 364-65 (citing 1993 O.J. (L95), art. 3(3), and Annex 1(a) through (q))

⁵³ Նույն փեղում 365 (citing 1993 O.J. (L95) 29, art. 6(1))

⁵⁴ Collins, *Compulsory Arbitration Agreements*, *supra* note 38, at 340

⁵⁵ Նույն փեղում

⁵⁶ Եվրոպական հանձնաժողովը ԵՄ գործադիր ձյուն է և պատասխանատու է խորհրդարանի և խորհրդի որոշումներն ի կատար ածելու համար:

⁵⁷ Հանձնարարականը պարտադիր օրենք չէ, սակայն անդամ երկրների վրա ունի ծանրակշիռ կատարման ազդեցություն և ծանրակշիռ ցուցիչ է, թե ինչպես անդամ երկրները պետք է վերաբերվեն այս կամ այն հարցին:

⁵⁸ Sternlight, *U.S. Out on a Limb*, *supra* note 4, at 845 (citing Commission Recommendation 98/257, 30 March 1998, Principles Applicable to the Bodies Responsible for Out-of-Court Settlement of Consumer Disputes, 1998 O.J. (L 115) 31, WL OJ 1998 L1 15/13.

արգելք է:⁵⁹

ԵՄ արդարադատության դատարանը վերջերս վճռեց, որ ազգային դատարանները պետք է հաշվի առնեն արբիտրաժային վերապահման վավերականությունը, եթե նույնիսկ դրա վավերականության վերաբերյալ միջնորդություն չի ներկայացվել արբիտրաժի մասին միջնորդության ժամանակ:⁶⁰

Սպառողներն ազատ են վեճի ծագումից հետո արբիտրաժ ընտրելու հարցում, սակայն դատարան դիմելու իրավունքից հրաժարվելը պետք է լինի կամավոր և տեղեկացված:⁶¹ Եվրոպական մոտեցումն է պաշտպանել ավելի թույլ կողմին, մինչդեռ ամերիկյանը՝ կողմերի ազատությունը պաշտպանելն է:⁶²

Միայնալ Թագավորություն և Ֆրանսիա. Հաշվի առնելով ԵՄ-ի կողմից փրամադրված ծանրակշիռ ցուցումները պարտադիր արբիտրաժի վերաբերյալ՝ որոշակի եվրոպական երկրներ, օրինակ՝ Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի օրենսդրությամբ կամ պրակտիկայում նախաՎեճային ԱՀ-ներն ընդհանուր առմամբ կամ ուղղակիորեն արգելվել են սպառողական գործարքներում:

Մեծ Բրիտանիայի 1988թ. «Սպառողների հետ արբիտրաժային համաձայնության մասին» օրենքը սահմանում էր, որ «նախքան վեճ առաջանալն սպառողի հետ կնքված յուրաքանչյուր այսպիսի պայմանագիր սպառողի համար չի կարող պարտադիր ուժ ունենալ»:⁶³ Այլ կերպ ասած՝ արգելվում էր պայմանագրով սահմանված պարտադիր ԱՀ-ի կատարումը սպառողի հետ հարաբերություններում, բացառությամբ, եթե ԱՀ-ն կնքվել է վեճի ծագումից հետո:⁶⁴

Սակայն օրենքում առկա էին եական սահմանափակումներ: Առաջին, «Սպառողների հետ արբիտրաժային համաձայնության մասին» օրենքը փրամադրվում էր միայն այն վարույթների վրա, որոնք մտնում էին Գերագույն դատարանի⁶⁵ ընդդատության շրջանակների մեջ, որը սահմանափակվում էր £5000-ից ցածր պայմանագրային, վնաս պատճառելու հետևանքով ծագած պարտավորությունների և մի շարք այլ գործերով:⁶⁶

Օրենքի երկրորդ սահմանափակումը վերաբերում էր տեղական ԱՀ-ին:⁶⁷

⁵⁹ Նույն տեղում

⁶⁰ Collins, *Compulsory Arbitration Agreements*, *supra* note 38, at 338 n.14 (citing Case C-168/05, *Mostaza Claro v. Centro Móvil Milenium SL*, 2006 E.C.R. I-10421).

⁶¹ Նույն տեղում, էջ 337 (citing from *Stretford v. Football Association Ltd*, EWCA Civ. 238, [2007] Bus LR 1052).

⁶² Draholz & Friel, at 386.

⁶³ Sternlight, *U.S. Out on a Limb*, *supra* note 4, at 864 n.105 (citing Robert Bradgate, Experience in the United Kingdom, in the Integration of Directive 93/13 into the National Legal System, at 32, Հասանելի է <http://europa.eu.int/comm/dgs/healthconsumer/events/event29o1.pdf>). Հղումը կատարվել է 03/03/ 2014

⁶⁴ Consumer Arbitration Agreement Act (U.K.), 1988, c. 21, s.1

⁶⁵ Նույն տեղում s.1(2).

⁶⁶ County Court Jurisdiction Order S.I. 1981/1123 and County Courts Act 1984, c. 28 s. 17.

⁶⁷ Philip Alexander Securities and Futures Ltd. v. Bamberger & Or, [1996] NLOR No 3684 (Court of Appeal – Civil Division).

Սպառողական ԱՀ-ի ամենաեական հատկանիշն այն էր, որ պահպանվեց դատարանների՝ նշված օրենքը շրջանցելու ազատությունը, երբ նրանք համոզված էին, որ հաճախորդն այս գործողության արդյունքում վնաս չէր կրելու:⁶⁸

Դիրեկտիվը և դրան կից Կանոնակարգերը⁶⁹ պարտադրեցին փոփոխել Մեծ Բրիտանիայի «Սպառողների հետ արբիտրաժային համաձայնության մասին» օրենքը: 1996թ. -ին Մեծ Բրիտանիայի խորհրդարանը չեղյալ հայտարարեց վերը նշված օրենքը:⁷⁰ Փոփոխության զուտ ազդեցությունն այն է, որ սպառողների պայմանագրերում նախավեճային արբիտրաժային դրույթները համարվում են անարդար, երբ հնարավոր հայցի գումարը £5000-ից պակաս է՝ այսպիսով բացառելով դատարանի գործողությունների հայեցողական ազատությունը: Մյուս բոլոր պարագաներում սպառողների պայմանագրերում նախավեճային արբիտրաժային դրույթները համարվում են ուժը կորցրած, եթե դրանք ճանաչվում են անարդար Դիրեկտիվի իմաստով: Վերջինիս դեպքում, դատավորները, կախված գործից, ունեն հայեցողական ազատություն որոշելու, թե արդյոք ԱՀ-ն անարդար է համաձայն ԵՄ Դիրեկտիվի:⁷¹ Սակայն, որոշելու համար, թե արդյոք դրույթը ենթակա է կատարման, թե ոչ, դատավորները պետք է առաջնորդվեն Դիրեկտիվով:

Ազատ առևտրի գրասենյակը, կիրառելով վերը նշված օրենքը, նպաստեց սպառողների պայմանագրերի փոփոխմանը՝ հեղինակականորեն պահանջելով ընկերություններից կամ ամբողջովին հանել պարտադիր արբիտրաժային վերապահումները, կամ հանել պարտադիր լինելու վերաբերյալ փարրը՝ հստակ սահմանելով, թե արդյոք սպառողներն ունեն արբիտրաժ դիմելու իրավունք, թե ոչ:⁷²

2.4. Պարտադիր, պարտավորեցնող արբիտրաժը Հայաստանում

Հարցումների արդյունքները վկայում են, որ Հայաստանում պարտադիր, պարտավորեցնող արբիտրաժային դրույթները հաճախորդների ֆինանսական/վարկային պայմանագրերում դառնում են առավել փարածված:⁷³

Այս համադրեքստում, բանկային ծառայությունների սպառողները հաճախ փողակ չեն ԱՀ-ների մասին կամ չունեն վիճարկելու, կամ վեճի լուծման այսպիսի եղանակին չհամաձայնելու հնարավորություն, կամ համապատասխան նախապես մշակված արբիտրաժային դրույթները վերանայելու/փոխելու

⁶⁸ Նույն փեղում, s. 4.

⁶⁹ Unfair Terms in Consumer Contracts Regulations 1999, S.I. 1999/2083.

⁷⁰ Arbitration Act 1996 (U.K.), 1996, c. 23.

⁷¹ PIAC and Option Consommateurs, page 43

⁷² Drahozal, at 372-3.

⁷³ *Stu* Հավելված 1

հնարավորություն՝ իրենց իրավունքներն ավելի լավ պաշտպանելու համար:⁷⁴ Հետևաբար, շատ դեպքերում հաճախորդները անգիտակցաբար կամ անտեղյակության պարճառով զրկվում են պայմանագրի կապակցությամբ ծագած վեճը դադարակա կարգով լուծելու իրավունքից: Ստացվում է, որ վարկ վերցնելու հնարավորություն փնտրող հաճախորդը պետք է ստորագրի պայմանագիրն այնպես, ինչպես կա կամ հրաժարվի վարկից: Հետևաբար, «սպառողի պաշտպանությունը վտանգված է... վարկային և ֆինանսական կարևոր ոլորտներում»:⁷⁵

Արբիտրաժն, անկասկած, կարող է լինել վեճերի լուծման արդար և արդյունավետ միջոց: Վեճերի լուծման այլընտրանքային միջոցները պետք է խրախուսվեն: Տեսականորեն արբիտրաժը կարող է վեճին փակ արդարացի լուծում, սակայն, միայն եթե այն ուժի մեջ է մտել երկու կողմերի միջև վեճի ծագումից հետո, հատկապես այն իրավիճակներում, երբ բանակցելու հնարավորությունը սկզբունքայնորեն անհավասար է, կամ գրեթե բոլոր դեպքերում անհավասար է:

Մինչդեռ, հաշվի առնելով, որ Հայաստանում արբիտրաժի մշակույթը դեռևս բավականաչափ զարգացած չէ՝ այսպիսի կիրառումը կարող է ոչ միայն բացասաբար ազդել իրական արբիտրաժի հեղինակության վրա, այլև խոչընդոտել դրա՝ որպես վեճերի լուծման այլընտրանքային մեթոդի զարգացմանը: Այնուամենայնիվ, ֆիզիկական անձ սպառողի շահերը պաշտպանելու քաղաքականության փեսանկյունից ճիշտ է, որ հաճախորդները ոչ միայն պարզապես տեղեկացվեն հետագա վեճերը լուծելու եղանակի մասին, այլև ԱՀ-ի իրավական հետևանքները մանրամասն բացատրելուց հետո արբիտրաժն առաջարկվի որպես առավել ձեռնարկ փարբերակ և ոչ թե «համաձայնվիր կամ հեռացիր» սկզբունքով:

⁷⁴ Հարցված հաճախորդներից ոչ մեկը բավարար կերպով պատկերացնում չի ունեցել արբիտրաժի մասին, արբիտրաժային համաձայնության էությունը նրանց չի պարզաբանվել, և իրենք էլ որևէ կերպ տեղեկացված չեն եղել արբիտրաժի մասին:

⁷⁵ *Hearing*, at 44 (statement of Patricia Sturdevant, Executive Director and General Counsel, National Association of Consumer Advocates).

ԳԼՈՒԽ 3

ԿՈՂՄԵՐԻ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՔԻՏՐԱԺԱՅԻՆ ՏՐԻԲՈՒՆԱԼԸ ՁԵՎԱՎՈՐԵԼԻՍ

Կողմի ինքնավարությունը արքիտրաժային մշակույթի նախնական փորձերից մեկն է:⁷⁶ Այն արքիտրաժի հիմնարար սկզբունքներից մեկն է, որը նաև կաշկանդում է արքիտրոնների իշխանությունը:⁷⁷

Շերկն ընդդեմ *Ալբերտո-Բուվեր ընկ.* գործում ԱՄՆ Գերագույն դատարանը մեկնաբանել է կողմերի ինքնավարությունը որպես «սանկապած բիզնես գործարքների համար կանխատեսելիությունն ապահովելու անկապտելի նախապայման»:⁷⁸

ԱՏ-ի իրավագործության անմիջական ակունքը գործի լուսմը արքիտրաժին վերապահելու կողմերի կամքի ազատությունն է:⁷⁹ Ըստ դոկտոր Շրայնգրուբերի՝ կամքի ազատությունը, ներառելով փոխադարձ համաձայնություն, ազատ ընտրություն, արտաքին ազդեցության բացակայություն, նույնպես գրնվում է պայմանագրային հարաբերությունների հիմքում:⁸⁰

Կողմերին նման իրավունքով օժտելու հիմքում ընկած են արքիտրի՝ որպես վեճը լուծող անձի գործի նրբություններին լավատեղյակ լինելու, վեճի առարկայի առնչությամբ խորը գիտելիք փիրապետելու, հասանելի, և նշված ոլորտում փորձ ունենալու հատկությունները:⁸¹ Ըստ մասնագետների՝ կողմերին որպես փորձունալի կազմի ձևավորողներ ընդունելը բխում է «արքիտրաժային վարույթի կանխատեսելիությունից»:⁸² Ինչպես փաստում է արքիտրաժային պատմությունը, արքիտր ընտրելու հնարավորությունն առանձնացնում է արքիտրաժը դատական

⁷⁶ Joshua Karton (2013). Էջ 77-78, 85

⁷⁷ Նույն տեղում

⁷⁸ Scherk v. Alberto- Cuver Co., 417 U.S.. 506, 516 (1974)

⁷⁹ Andrea M. Steingruber, *Consent in International Arbitration*, Oxford University Press, 2012. Հասանելի է

<http://books.google.am/books?id=EacyqvPBEFQC&pg=PT29&dq=notion+of+party+autonomy+in+arbitration&hl=en&sa=X&ei=AUT6UtrLDqWqyA00oIHQCA&ved=0CE4Q6AEwBw#v=onepage&q=notion%20of%20party%20autonomy%20in%20arbitration&f=false/> Հղումը կատարվել է 19 փետրվարի 2014թ., պար. 2-04

⁸⁰ Նույն տեղում

⁸¹ Gary Born, *International Commercial Arbitration*, Volume 1, 2009, Kluwer Law International The Netherlands. Հասանելի է

http://books.google.am/books?hl=en&lr=&id=5GNlyRPd9NUC&oi=fnd&pg=PR7&dq=impartial+arbitrator&ots=uYcy6Z44De&sig=Bnka0CI0TEm-juTnWijKepGIbFA&redir_esc=y#v=onepage&q=impartial%20arbitrator&f=false/ Հղումը կատարվել է 19 փետրվարի 2014թ., էջեր 1359-1360, 1463;

Christian Konrad, Philipp Peters; Konrad & Partners, *Arbitration: the method of choice in construction?* / 06 December, 2012/ CDR (Commercial Dispute resolution). Published by Global Legal Group. Հասանելի է <http://www.cdr-news.com/categories/arbitration-and-adr/arbitration:-the-method-of-choice-in-construction/> Հղումը կատարվել է 19 փետրվարի 2014թ.:

⁸² Նույն տեղում; Joshua Karton (2013). *The Culture of International Arbitration and the Evolution of Contract Law*: OXFORD, UK, p. 75.

համակարգից:⁸³

Այն պնդումը, որ կողմի ընտրած արբիտրն ի սկզբանե հակված կլինի հոգուր այդ կողմի որոշում կայացնել, այնքան էլ հիմնավոր չէ, քանզի արբիտրի այլ հատկանիշներն առավել էական ազդեցություն ունեն, մասնավորապես՝ արբիտրի հեղինակությունը, փոփոխելի հետ աշխատելու կարողությունը հավասարակշռում են այդ հակվածությունը:⁸⁴

3.1. Կողմերի ինքնավարությունը փարբեր ազգային օրենսդրություններում

Իռլանդիայում կողմերն ազատ են ընտրելու իրենց վեճը լուծող անձին:⁸⁵ Արբիտրի ընտրությունն իրականացվում է երեք եղանակով: Առաջինը՝ կողմերն ուղղակի նշում են արբիտրին իրենց պայմանագրում: Երկրորդը՝ կողմերը համաձայնության չգալու դեպքում կարող են դիմել հատուկ մասնագիտացված մարմնին՝ համապատասխան որակավորմամբ արբիտր նշանակելու խնդրանքով: Երրորդ փարբերակը Բարձր դատարանի դիմելն է նույն խնդրանքով: Համաձայնության բացակայության պարագայում վերջին երկու եղանակները գործում են հավասարապես, այսինքն՝ կողմերը կարող են ընտրել, թե որ մարմնին դիմեն արբիտր նշանակելու խնդրանքով:⁸⁶

Հնդկաստանում կողմերը կարող են որոշել արբիտրների թիվը և նրանց ներկայացվող պահանջները:⁸⁷ Դատարանի կողմից արբիտր նշանակելու դեպքում հաշվի է առնվում արբիտրի որակավորման և մասնագիտության վերաբերյալ կողմերի կամքը՝ արտահայտված պայմանագրում:⁸⁸

Մեքսիկայի առևտրային օրենսգիրքը թույլատրում է կողմերին պայմանագրով որոշելու արբիտրի անձը և արբիտրների քանակը:⁸⁹

Սաուդյան Արաբիայի օրենսդրությամբ կողմերին կարող է առաջարկվել արբիտրների ցանկ, որից ընտրվելու է արբիտր: Կողմերը կարող են նաև արբիտր ընտրել այդ ցանկում չընդգրկված անձին:⁹⁰ Այս սկզբունքն արտացոլված է գրեթե

⁸³ Andrea M. Steingruber, para 2:13-2:14; Gary Born, pp. 1365-1367.

⁸⁴ Joshua Karton (2013). էջ 49-56, 75-76:

⁸⁵ Nicola Dunleavy & Gearóid Carey, 'Guide To International Arbitration 2013 - 10th Edition: Ireland' 22 August, 2013/ Հասանելի է <http://www.mondaq.com/x/259234/Arbitration+Dispute+Resolution/Guide+to+International+Arbitration+2013/> Հղումը կատարվել է 30 նոյեմբերի 2013, կետ. 5:

⁸⁶ Նույն փեղում, Nicola Dunleavy & Gearóid Carey Mondaq.

⁸⁷ Saurendra Rautray, 'Law Of And Procedure For Appointment Of Arbitrator (s): India' (30 November, 2012). Հասանելի է [http://www.mondaq.com/india/x/205186/Arbitration+Dispute+Resolution/Law+Of+And+Procedure+For+Appointment+Of+ArbitratorS/](http://www.mondaq.com/india/x/205186/Arbitration+Dispute+Resolution/Law+Of+And+Procedure+For+Appointment+Of+ArbitratorShttp://www.mondaq.com/india/x/205186/Arbitration+Dispute+Resolution/Law+Of+And+Procedure+For+Appointment+Of+ArbitratorS/) Հղումը կատարվել է 1 նոյեմբերի, 2013թ.:

⁸⁸ Նույն փեղում

⁸⁹ Thomas, S. B. (2006). International Arbitration: A Historical Perspective and Practice Guide Connecting Four Emerging World Cultures: China, Mexico, Nigeria and Saudi Arabia. (H. Smit, Ed.) The American Review of International Arbitration, 17 (2), 222-223.

⁹⁰ Նույն փեղում, Thomas, S. B. (2006). էջ 234-235

բոլոր միջազգային արբիտրաժային կենտրոնների կանոններում:⁹¹

3.2. Արբիտրի նշանակումը

Արդյոք արբիտրի նշանակումը արբիտրաժային կենտրոնի կողմից համահունչ է կողմերի ինքնավարության սկզբունքին:

Հնարավոր է լինեն դեպքեր, երբ վիճող կողմերը համաձայնել են դիմել ԻԱ կենտրոնին՝ արբիտր նշանակելու խնդրանքով: Երբ կողմերը չեն կողմնորոշվում, թե ում ընտրեն, ինչպես գնահատեն արբիտրի որակները և փորձը, կարող են վստահել ԻԱ մարմնի հեղինակությանը, փորձին, փրամադրած երաշխիքներին ու գիտակցված, կամավոր կերպով նրան փոխանցել արբիտր ընտրելու իրենց իրավունքը: Այս դեպքում ո՛չ օրենքը, ո՛չ էլ արտաքին գործոնները չեն ազդում կողմի ընտրության վրա, այլ կողմերը գործում են կամքի ինքնավարության սկզբունքին համապատասխան: Հետևաբար, արբիտրի նշանակումը ԻԱ կենտրոնի կողմից, եթե այդ խնդրանքով կողմերը դիմել են նրան, չի խախտում կողմերի ինքնավարության սկզբունքը:

Արբիտր նշանակելու ԱՄՊ-ի կանոնները. ԱՄՊ արբիտրաժային վարույթի ընթացքում ԱՄՊ կանոնների կիրառման ապահովումն իրականացնում է ԱՄՊ-ի Միջազգային արբիտրաժային դատարանը:⁹² Կողմերի միջև արբիտրի թվի հարցում համաձայնության բացակայության դեպքում միանձնյա արբիտրին նշանակում է այդ դատարանը:⁹³ Որոշ դեպքերում այս դատարանը, հաշվի առնելով մի շարք հանգամանքներ, հաստատում է արբիտրի թեկնածուին որպես փոխարինակի կազմ:⁹⁴

ԼՄԱԴ կանոններ. ԱՄ-ն ձևավորվում է ԼՄԱԴ-ի կողմից:⁹⁵ Կողմերը կարող են համաձայնվել ինքնուրույն նշանակելու արբիտրին: Այս դեպքում ԼՄԱԴ-ը պետք է հաստատի արբիտրի նշանակումը:⁹⁶ ԼՄԱԴ-ը կողմերին կարող է փրամադրել

⁹¹ ԱՄՊ-ի կանոնների համաձայն՝ արբիտրաժային կենտրոն ներկայացրած դիմումը նաև պետք է պարունակի նշում արբիտրի թեկնածուի վերաբերյալ: ԼՄԱԴ կանոնների 7-րդ կետով առաջնությունը տրվում է կողմերի կամքին, եթե նրանք պայմանագրով համաձայնել են արբիտրի անձի շուրջ: ՈՒՆՍԻՏՐԱԼ կանոններ, Կետ 6. կողմերին տալիս է հայեցողություն ընտրելու արբիտրին կամ դիմելու արբիտրաժային կենտրոնին արբիտր նշանակելու խնդրանքով: Նյու Յորքի Կոնվենցիա, Հոդված 5.1.դ) – անուղղակի կերպով ընդունում է կողմերի ինքնավարությունը՝ նշելով, որ արբիտրաժային փոխարինակի որոշումը չի կարող կատարվել, եթե փոխարինակը չի ձևավորվել կողմերի համաձայնությանը համապատասխան:

⁹² ԱՄՊ կանոններ, Հավելված 1, Կետ 1: Հասանելի է <http://www.iccwbo.org/products-and-services/arbitration-and-adr/arbitration/icc-rules-of-arbitration/> Հղումը կատարվել է 20 հունվարի, 2014թ.

⁹³ Նույն տեղում, կետ 11

⁹⁴ Նույն տեղում, կետ 13

⁹⁵ ԼՄԱԴ-ի կանոններ, Հոդված 5: Հասանելի է http://www.lcia.org/Dispute_Resolution_Services/lcia-arbitration-rules-2014.aspx#/ հղումը կատարվել է 20 հունվարի, 2014թ.

⁹⁶ ԼՄԱԴ կանոններ, հոդված 7: Հասանելի է http://www.lcia.org/Dispute_Resolution_Services/lcia-arbitration-rules-2014.aspx#/ Հղումը կատարվել է 20 հունվարի, 2014

արբիտրանտների թեկնածուների ցուցակ, որից կողմերը կարող են ընտրել արբիտր:⁹⁷

ԱՄՆ փորձը արբիտր նշանակելիս. ԱՄՆ-ում հայտնի են առնվազն չորս ԻԱ կենտրոններ:⁹⁸

Այ-Սի-Դի-Ար-ի կանոններով կողմերը կարող են անմիջապես ընտրել արբիտր կամ դիմել կենտրոնի օգնությանը:⁹⁹ Կենտրոնին դիմելու դեպքում նշանակվում է գործի ղեկավար, որն էլ վիճող կողմերին տրամադրում է կենտրոնի արբիտրանտների ցանկը: Հետո կողմերն արտահայտում են իրենց նախապատվությունը, և գործի ղեկավարը նշանակում է փոխադարձաբար համաձայնեցված թեկնածուին որպես արբիտր:¹⁰⁰

ՖԻՆՐԱ-ում¹⁰¹ գործում է արբիտրանտների որակավորման հետևյալ մեխանիզմը:¹⁰² ՖԻՆՐԱ-ին դիմած կողմերին տրամադրվում է արբիտրանտների փաստագրային ցանկ, ովքեր վիճող կողմերի հետ չունեն շահերի բախում: Կողմերը թեկնածուներից 4-ին բացառում են և նշում նախընտրելի թեկնածուին: Երկկողմանի նախապատվություն ստացած թեկնածուն նշանակվում է արբիտր:¹⁰³

ՋԱՄՍ-ի կանոնների համաձայն եթե կողմերը չեն համաձայնվել արբիտրի թեկնածուի հարցում, ապա ՋԱՄՍ-ը տրամադրում է նրանց արբիտրանտների ցուցակ:¹⁰⁴ Կողմերը կարող են բացառել թեկնածուներից երկուսին կամ երեքին,¹⁰⁵ իսկ մնացած թեկնածուներին դասակարգել ըստ նախապատվության: Առավել

⁹⁷ http://www.lcia.org//Frequently_Asked_Questions.aspx#List/ Հղումը կատարվել է 20 հուլիսի, 2014

⁹⁸ ICDR (International Center for Dispute Resolution), established in 1996 as a division of the American Arbitration Association; FINRA – forum specialised in solving disputes in the securities industry, founded in 2007, Washington D.C. JAMS The Resolution Experts – Հասանելի է <http://www.jamsadr.com/> Հղումը կատարվել է 14 ապրիլի 2014: American Arbitration Association. Հասանելի է <https://www.adr.org/>. Հղումը կատարվել է 14 ապրիլի 2014

⁹⁹ Mark E. Appel, Senior Vice President, ICDR. Taking Your Case to the International Center for Dispute Resolution.

¹⁰⁰ Նույն տեղում, Mark E. Appel, Senior Vice President

¹⁰¹ FINRA Dispute Resolution. Հասանելի է <http://www.finra.org/ArbitrationAndMediation/>. Հղումը կատարվել է 19 փետրվարի 2014 ՖԻՆՐԱ-ն մասնագիտացված է ներդրողների, վարկային կազմակերպությունների և անհատ բրոկերների միջև դրամական և գործարար հարաբերություններից ծագող վեճերի լուծման մեջ:

¹⁰² Նույն տեղում: Անձը, որը ցանկություն է հայտնել ընդգրկվելու արբիտրանտների ցանկում, պետք է կատարի հետևյալ քայլերը. նախ՝ հարկավոր է դիմում հանձնել, ունենալ 5 տարվա աշխատանքային փորձ և առնվազն 2 տարվա համալսարանական կրթություն: ՖԻՆՐԱ-ի հաստատված թեկնածուներն անցնում են Արբիտրանտների փարրական դասընթացը, որն ավարտելուց հետո միայն անձը կարող է ընդգրկվել ՖԻՆՐԱ-ի արբիտրանտների ցանկում: Իսկ նախագահող արբիտրը պետք է ավարտած լինի ՖԻՆՐԱ-ի նախագահող արբիտրանտների դասընթացը, FINRA, Arbitration Rules, 12400 – 12402. Հասանելի է http://finra.complinet.com/en/display/display_main.html?rbid=2403&element_id=4140/ Հղումը կատարվել է 19 փետրվարի, 2014թ.

¹⁰³ Նույն տեղում, FINRA, Arbitration Rules.

¹⁰⁴ ՋԱՄՍԻ կանոնների, Կեր 15: Հասանելի է <http://www.jamsadr.com/rules-comprehensive-arbitration/#Rule%2016.1> <http://www.jamsadr.com/rules-comprehensive-arbitration/#Rule%2016.1/> Հղումը կատարվել է 10 ապրիլի 2014թ.: Միանձնյա փրիբունալի դեպքում 5 հոգուց կազմված ցուցակ, իսկ երեք արբիտրից կազմված փրիբունալի դեպքում 10:

¹⁰⁵ Նույն տեղում: Միանձնյա փրիբունալի դեպքում բացառում են երկու թեկնածուին, իսկ երեք արբիտրից կազմված փրիբունալի դեպքում երեքին:

բարձր նախապատվություն ստացած թեկնածուին ԶԱՄՍ-ը նշանակում է արբիտր:¹⁰⁶

Ամերիկյան արբիտրաժային ասոցիացիայի կանոնները ևս սահմանում են նմանատիպ ընթացակարգ առ այն, որ ասոցիացիան կողմերին տրամադրում է արբիտրների ցանկ, որից կողմերը նախ բացառում են թեկնածուին, ապա կամ փոխադարձ համաձայնությամբ ընտրում որևէ թեկնածուին, կամ տալիս են իրենց նախապատվությունը: Այս դեպքում երկկողմանի նախապատվություն ստացած թեկնածուն էլ ասոցիացիայի կողմից նշանակվում է արբիտր:¹⁰⁷

3.3. Կամքի ինքնավարությունը արբիտրաժում

Այս սկզբունքը նախատեսված է ՀՀ օրենսդրությամբ:¹⁰⁸ Կամքի ինքնավարության տարրերից մեկն էլ պայմանագրի ազատությունն է, որը նախատեսված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 437-րդ հոդվածում: Ըստ դրա՝ կողմերը պայմանագրի գրեթե բոլոր պայմանների շուրջ համաձայնության հասնելու և գործընկերոջ հետ պայմանագրային հարաբերությունները կարգավորելու լայն հայեցողություն ունեն: Ըստ Օրենքի 1-ին հոդվածի «...կողմերն ազատ են իրենց միջև վեճերի լուծման ընթացակարգի շուրջ համաձայնվելու հարցում...»: Այս տրամաբանությանը համահունչ՝ կողմերը նույնպես պետք է հնարավորություն ունենան ընտրելու իրենց վեճը լուծող մարմին:

ՖԱ-ի արբիտրի ընտրությունը. Օրենքով նախատեսված է, որ կողմերը կարող են ընտրել արբիտր կամ համաձայնության գալ նշանակող մարմնի հարցում, ազատ են սահմանելու արբիտրին ներկայացվող ցանկացած պահանջ:¹⁰⁹ Եթե կողմերը արբիտր նշանակելու ընթացակարգի շուրջ փոխադարձ համաձայնության չեն գալիս, ապա արբիտրին նշանակում է

¹⁰⁶ Նույն տեղում

¹⁰⁷ American Arbitration Association, Կանոններ, կետ 12:

Հասանելի է https://www.adr.org/aaa/faces/rules/searchrules/rulesdetail?doc=ADRSTG_004130&_afLoop=377735757389796&_afWindowMode=0&_afWindowId=135kn0pygy_121#%40%3F_afWindowId%3D135kn0pygy_121%26_afLoop%3D377735757389796%26doc%3DADRSTG_004130%26_afWindowMode%3D0%26_adf.ctrl-state%3D135kn0pygy_181/ Հղումը կատարվել է 10 ապրիլի 2014թ.

¹⁰⁸ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 437-րդ հոդվածը սահմանում է պայմանագրի ազատության իրավունքը, եթե պարտավորությունը նախատեսված չէ այլ օրենքներով կամ նախապես ձեռք բերված փոխադարձ համաձայնությամբ: Օրենքի 1-ին հոդվածը ևս նախատեսում է վեճի լուծման մեթոդի ընտրության հնարավորությունը որպես կողմերի ինքնավարության դրսևորում, ինչն էլ կազմում է սույն օրենքի հիմնասյուններից մեկը:

¹⁰⁹ Նույն տեղում Օրենք, Հոդված 11, 1-ին մաս 1:

դափարանը:¹¹⁰

Ինչպես երևում է փարբեր ազգային և միջազգային արբիտրաժային կենտրոնների կանոնների վերլուծությունից, որոշ ԻԱ կենտրոններ (օրինակ՝ ԼՍԱԴ, Սաուդյան Արաբիա, ՖԻՆՐԱ, ՋԱՄՍ, ԱԱԱ) ունեն արբիտրների ցանկ: Կողմերը կարող են նաև արբիտր ընտրել այն անձին, որն ընդգրկված չէ այդ կենտրոնի ցուցակում:

Սակայն ՖԱ-ի մոտեցումը փոքր-ինչ այլ է. արգելվում է արբիտր նշանակել ՖԱ-ի ցուցակում չներառված անձին:¹¹¹ Ըստ ՖԱ-ի նախագահի՝ այդպես բացառվում է ՖԱ-ի անունից չորակավորված անձի կողմից կամայական որոշում կայացնելը, ինչն էլ հետագայում կարող է որոշումը չեղյալ ճանաչելու հիմք լինել: Իսկ նման որոշումներով կվնասվի ՖԱ-ի հեղինակությունը:¹¹² Այսինքն՝ ՖԱ-ն մեկ նպատակին հասնում է մեկ այլ նպատակի հաշվին. պահպանելով ՖԱ-ի հեղինակությունը՝ սահմանափակվում է կողմերի ինքնավարությունը: Մինչդեռ այդպիսի հիմնարար սկզբունքի սահմանափակումը նս վնասում է ՖԱ-ի հեղինակությունը:

ՖԱ-ի Կանոնակարգը կողմերին երկու փարբերակ է առաջարկում կողմերը համաձայնում են արբիտրի թեկնածուի հարցում կամ միանձնյա արբիտրը ՖԱ-ի նախագահին է:¹¹³ Խնդրահարույցն այն է, որ եթե կողմերը չեն համաձայնվում թեկնածուի հարցում, ապա մեխանիկորեն ՖԱ-ի նախագահին է նշանակվում արբիտր:

Այսպիսով, ՖԱ-ի Կանոնակարգը սահմանափակում է արբիտր նշանակելու խնդրանքով ՖԱ-ին դիմելու հնարավորությունը: Մինչդեռ այսպիսի կանոնը հակասում է կողմերի ինքնավարության սկզբունքին՝ ստիպելով կողմերին ընդունել ՖԱ-ի նախագահին որպես միանձնյա արբիտր: Մյուս կողմից, այն հակասում է Օրենքին, քանի որ Օրենքն արտոնում է կողմերին դիմելու ԻԱ կենտրոն արբիտր նշանակելու խնդրանքով:

Հաշվի առնելով վերոգրյալը և կարևորելով ՖԱ-ի հանրային բնույթը՝ առաջարկում ենք կողմերին փալ հնարավորություն ՖԱ-ի ցանկում չընդգրկված անձին ընտրելու որպես արբիտր, եթե ՖԱ-ն հաստատի նրա որակավորման համապատասխանությունը ՖԱ-ի չափանիշների հետ:

¹¹⁰ Օրենք, Հոդված 11, 4-րդ մաս. «Եթե նշանակման ընթացակարգի վերաբերյալ համաձայնությունը չի նախատեսում նշանակումն ապահովող այլ միջոցներ, ապա կողմերից յուրաքանչյուրն անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու պահանջով կարող է դիմել սույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանված դափարան այն դեպքերում, երբ կողմերի համաձայնեցրած ընթացակարգը կիրառելիս՝

- 1) կողմերից մեկը չի գործում դրա պահանջներին համապատասխան կամ
- 2) կողմերը կամ կողմերի նշանակած արբիտրները չեն կարողանում համաձայնության գալ սահմանված ընթացակարգի համաձայն կամ
- 3) սահմանված ընթացակարգի շրջանակներում երրորդ կողմը, ներառյալ՝ հաստատությունը, չի կատարում իրեն վերապահված որևէ գործառնությունը»:

¹¹¹ ՖԱ-ի նախագահի հետ հարցազրույց:

¹¹² Նույն տեղում

¹¹³ ՖԱ-ի Կանոնակարգ, Կետ 13: Հասանելի է <http://uba.am/upload/9104.pdf/> Հղումը կատարվել է 25 ապրիլի, 2014:

ԳԼՈՒԽ 4

ԱՐԲԻՏՐԻ ԱՆԱՀԱՌՈՒԹՅՈՒՆԸ/ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՐԲԻՏՐԱԺԻ ՀԻՄՆԱՐԱՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

Պատմականորեն արբիտրները կրել են անաչառության պարտականություն:¹¹⁴ Ավելին, ըստ Գ. Բորնի՝ Հին Հունաստանում «արբիտր» եզրույթի հոմանիշն է եղել «անաչառություն»:¹¹⁵

Որքան բարձր է արբիտրի անաչառության մակարդակը, այնքան առավել խորը ակնկալիք ունի հանրությունն արբիտրաժից որպես արդարություն հաստատող հարթակ:¹¹⁶

Անաչառության գործնական կիրառումը փարբերվում է դրա փեսական մեկնաբանումից, քանզի կողմերի ինքնավարության սկզբունքը կողմերի կամքին առաջնային փեղ է հապկացնում՝ ի փարբերություն իրավական կարգավորումների:¹¹⁷ Հետևաբար, փաստերի և պայմանագրի պայմանների դերակատարումը յուրաքանչյուր գործում էական է:

Աչառությունը հոգուտ մեկ կողմի գործելն է,¹¹⁸ իսկ անաչառությունը նման նախատրամադրվածության բացառումն է:¹¹⁹ Մեկ այլ մասնագետ, զարգացնելով եզրույթի շրջանակը, նշում է, որ արբիտրի գործողությունները կարող են առաջացնել անաչառության պակասի փավորություն կամ պարզապես դրա պակաս:¹²⁰ Ըստ հեղինակների՝ անաչառությունը վերաբերում է մտքի վիճակին, այն վերաբերմունք է, հետևաբար աչառությունն ապացույցելը բարդ է:¹²¹

ՄԻԵԴ-ի դիրքորոշումը անաչառության վերաբերյալ գրեթե նույնանման է:¹²²

¹¹⁴ Gary Born, (2009). p 1462; Henry Gabriel & Anjanette H. Raymond, (2005). Ethics for Commercial Arbitrators. *Wyoming Law Review. University of Wyoming* 453(5)

¹¹⁵ Gary Born, (2009). 1462

¹¹⁶ Henry Gabriel & Anjanette H. Raymond, (2005).

¹¹⁷ Gary Born, (2009), p 1465.

¹¹⁸ Joseph F. Morrissey and Jack M. Graves. *International Sales Law and Arbitration*, Kluwer Law International BV, The Netherlands – 2013. p. 363.

¹¹⁹ Gary Born, (2009), p 1465.

¹²⁰ Henry Gabriel & Anjanette H. Raymond

¹²¹ Նույն փեղում

¹²² Պիեռսակն ընդդեմ Բելգիայի գործ no. 8692/79. (ՄԻԵԴ, 1 հոկտեմբերի, 1982) – անաչառության չափանիշի բովանդակությունը կազմում են կողմնակալության կամ նախատրամադրվածության բացակայությունը:

Այն առանձնացնում է սուբյեկտիվ¹²³ և օբյեկտիվ¹²⁴ անաչառություն:

Օրենքում ևս նախատեսված է անաչառությունը որպես արբիտրաժի հիմնական սկզբունքներից մեկը:¹²⁵

4.1. Անաչառությունը միջազգային արբիտրաժային փարբեր կենտրոնների կանոններում և ազգային օրենսդրություններում

ԱՄՊ -ի կանոններն անմիջականորեն սահմանում են արբիտրի (նախքան նշանակվելը և որպես գործող արբիտրին բացարկ հայտնելու հիմք) և փրիբունալի անաչառությունը:¹²⁶ Ավելին, ԱՄՊ-ն իրավունք ունի կողմերի ընտրած արբիտրի թեկնածուին հաստատել կամ մերժել՝ հաշվի առնելով վերջինիս անաչառությունը:¹²⁷

ԼՍԱԴ -ի կանոններն արբիտրի թեկնածուին պարտավորեցնում են հաստատել այնպիսի պայմանների բացակայությունը, որոնք կարող են հիմնավոր կասկած առաջացնել իր անաչառության հանդեպ:¹²⁸ Անաչառությունը նաև հիմք է արբիտրին բացարկ հայտնելու համար:¹²⁹

ՌԻՆՍԻՏՐԱԼ Կանոններում,¹³⁰ ինչպես նաև **ՌԻՆՍԻՏՐԱԼ Սողեյալին օրենքում**,¹³¹ արբիտրը համարվում է անաչառ, եթե նախապես բացահայտել է

¹²³ Հաուշիլդն ընդդեմ Դանիայի, գործ no. 10486/83 (ՄԻԵԴ, 26 հոկտեմբերի 1989), պար. 46 կողմերից մեկի հանդեպ անձնական համոզում: Քանի որ այն բարդ է ապացույցել, գործում է սուբյեկտիվ անաչառության կանխավարկածը, քանի դեռ հակառակի չի ապացուցվել:

¹²⁴ Դե Կուբերն ընդդեմ Բելգիայի, գործ no. 9186/80 (ՄԻԵԴ, 26 հոկտեմբերի 1984) պար. 24, կողմնակալության փրկավորությունը կամ անկողմնակալության պակասը, որ ողջամիտ ուսումնասիրողի մոտ կարող են առաջացնել օրինավոր կասկած, բավարար են փաստելու համար, որ դատավորը գործել է օբյեկտիվ աչառությամբ: ՄԻԵԴ-ը շեշտում է, որ կողմնակալության փրկավորությունը ներառվում է օբյեկտիվ թեստում: Այն շարունակում է նաև վերլուծել, որ քանի որ նախաքննության և դատաքննության մարմինների գործողությունների առարկաները փարբեր են, միևնույն անձը կարող է ներգրավված լինել նախաքննությանը, ապա մասնակցել դատաքննությանը՝ մնալով անաչառ: Միաժամանակ ՄԻԵԴ գրում է, որ այդ հանգամանքը կարող է առաջացնել անաչառության պակասի մտահոգություն մեղադրյալի մոտ, երբ վերջինս փեսնի միևնույն անձին նախաքննության փուլում, այնուհետև դատարանում որպես դատավոր: Հետևաբար գործառույթների միավորումը և կարարումը մեկ անձի կողմից կհանգեցնի դատարանի անաչառության պահանջի խախտմանը: Մինչդեռ Պաղովանին ընդդեմ Իտալիային գործում (no. 13396/87, (ՄԻԵԴ, 26 փետրվարի 1993) պար. 27) արտահայտվել է այն դիրքորոշումը, որ միայն այդպիսի մտահոգությունը չի կարող վճռորոշ լինել, այլ այն պետք է օբյեկտիվորեն հիմնավորված լինի, այսինքն՝ յուրաքանչյուր դեպքում պետք է քննել արդյոք նման մտահոգությունը օբյեկտիվորեն արդարացված է:

¹²⁵ Օրենք, Հոդված 1, 1-ին մաս:

¹²⁶ ԱՄՊ կանոններ, կետեր 11 և 14: Հասանելի է file:///D:/My%20Documents/Downloads/ICC_865_ENG_Arbitration-Mediation.pdf/ Հղումը կատարվել է 10 մարտի 2014թ.

¹²⁷ Նույն փեղում

¹²⁸ ԼՍԱԴ-ի կանոններ, կետ 5.3: Հասանելի է http://www.uncitral.org/uncitral/en/uncitral_texts/arbitration/2010Arbitration_rules.html/ Հղումը կատարվել է 10 մարտի 2014

¹²⁹ Նույն փեղում, կետ 10.3

¹³⁰ ՌԻՆՍԻՏՐԱԼ Արբիտրաժային կանոններ, կետ 11: Հասանելի է http://www.uncitral.org/uncitral/en/uncitral_texts/arbitration/2010Arbitration_rules.html/ Հղումը կատարվել է 10 մարտի 2014թ.

¹³¹ ՌԻՆՍԻՏՐԱԼ «Առևտրային արբիտրաժի մասին» մողեյալին օրենք, Հոդված 12: Հասանելի է http://www.uncitral.org/pdf/english/texts/arbitration/ml-arb/06-54671_Ebook.pdf/ Հղումը կատարվել է 10 մարտի 2014թ.

բոլոր այն հանգամանքերը, որոնք կարող են հիմնավոր կասկած առաջացնել: Անաչառությունը նաև բացարկման հիմք է:

ԱՄՆ ԱՖՀ -ն այն դիտարկում է միայն արբիտրաժային որոշումը չեղյալ ճանաչելու հիմք:¹³² ԱՄՆ Գերագույն դատարանն իր նախադեպային որոշմամբ սահմանել է, որ արբիտրները պետք է առավել բժախնդիր լինեն անաչառություն դրսևորելիս, քան դատավորները:¹³³ Հետևաբար, արբիտրները պետք է ազնիվ լինեն՝ բացահայտելով իրենց գործարար հարաբերությունները կողմերից որևէ մեկի հետ:¹³⁴

Ըստ ԱՄՆ նախադեպային գործերի՝ անաչառության հիմնական տարրը արբիտրի և կողմերից մեկի միջև առկա *գործարար հարաբերությունն է*:¹³⁵ *Ուիլերի* գործում ընդգծվում է դատարանի հակվածությունը չեղյալ ճանաչել այն որոշումը, որն ընդունվել է հատուկ գիտելիք ունեցող արբիտրի անդամությամբ փրիբունալի կողմից:¹³⁶

Պարկ Պլազա գործում Կալիֆորնիայի դատարանը շեշտում է, որ եթե չեզոք արբիտրը նաև դատարանում է ծառայություն մատուցում առանց դատարանի աշխատող լինելու, ապա այդպիսի հարաբերությունները գործարար բնույթի չեն:¹³⁷

ՋԱՄՍ-Ֆարգո գործում¹³⁸ հնարավոր կողմնակալության փրկավորությունը մեկնաբանվել է հետևյալ կերպ. քանի որ ՋԱՄՍ կազմակերպության բաժնետերերը Ֆարգո ընկերությունում ունեն երկրորդային շահ,¹³⁹ նրանց միջև ձևավորվել են

¹³² ԱՄՆ Արբիտրաժի ֆեդերալ ակտ, Հոդված 10(a)(2): Հասանելի է <http://www.law.cornell.edu/uscode/text/9/10/>. Հղումը կատարվել է 25 փետրվարի, 2014թ.

¹³³ *Commonwealth Coating Corp. v. Cont'l Ca Co.*, 393 U.S. 145 (U.S. Ct. 1968). Available at <http://supreme.justia.com/cases/federal/us/393/145/case.html/> Հղումը կատարվել է 20 հունվարի 2014թ.: Այսպիսի պահանջկոտությունը հիմնավորվում է այն փաստարկով, որ արբիտրների կայացրած որոշումը ենթակա չէ վերաքննության, իսկ նրանք ունեն գործողության լայն հայեցողություն:

¹³⁴ *Gonzales v. Interinsurance Exchange of Automobile Club*. Ըստ այս մոտեցման՝ անձնական հարաբերությունները բավարար չեն սպեղծելու կողմնակալության փրկավորություն, այլ այդպիսի հարաբերությունները պետք է կրեն գործարար բույթ:

¹³⁵ *Gonzales v. Interinsurance Exchange of Automobile Club*. Ի սկզբանե սկզբունքը ենթադրում էր, որ նման հարաբերությունները արբիտրին առաջնորդում են անբնական նախապատվություն փալ կողմերից մեկին՝ առաջացնելով հնարավոր կողմնակալության փրկավորություն:

¹³⁶ *Wheeler v. St. Joseph Hospital* Հասանելի է <http://law.justia.com/cases/california/calapp3d/63/345.html/> Հղումը կատարվել է 10 փետրվարի 2014թ. - ԱՄ-ի արբիտրներից մեկը բժիշկ էր: Քանի որ փրիբունալը քննում էր բժշկական գործողության հետևանքով պատճառած վնասի գործ, այդ բժշկի մասնագիտական հատուկ գիտելիքը կարող էր ազդել մյուս անդամների կարծիքի վրա:

¹³⁷ *Park Plaza, Ltd. v. Pietz* (1987)193 Cal. App. 3d 1414 [239 Cal. Rptr. 51]. Available at <http://law.justia.com/cases/california/calapp3d/193/1414.html/> Այսինքն՝ այն արբիտրների դեպքում, որոնք նաև ծառայություն են մատուցում դատարաններում և ստանում վարձատրություն, պետք է հարաբերությունների գործարար բնույթը հիմնավորվի ապացույցելու համար կողմնակալության փրկավորությունը; *Matthew David Disco* (1993). *The impression of possible bias: What a neutral arbitrator must disclose in California*, *Hastings Law Journal*.

¹³⁸ Նույն տեղում *Matthew David Disco* (1993). *The impression of possible bias: What a neutral arbitrator must disclose in California*, *Hastings Law Journal*.

¹³⁹ Նույն տեղում, *ՋԱՄՍ-ի արբիտրները արբիտրաժային ծառայություն են մատուցել նաև Ֆարգո-ի համար: Հետևաբար ՋԱՄՍ-ի բաժնետերերը կարող են ազդել արբիտրների վրա որպես ՋԱՄՍ-ի աշխատողների:*

վստահություն, հավատ, և առկա է գործարար բնույթի հարաբերություն: Իսկ գործարար բնույթի հարաբերությունները հանգեցնում են կողմնակալության փրկավորության առաջացմանը:

Անգլիայի արբիտրաժային ակտը (1996) կրկնում է ՈՒՆՍԻՏՐԱԼ Կանոնների կարգավորումները:¹⁴⁰ Ներկայումս գործող չափանիշը հետևյալն է. արդյոք տեղեկացված կամ արդարամիտ ուսումնասիրողի մոտ կառաջանա կասկած անաչառության հանդեպ:¹⁴¹

ՌԴ Բարձրագույն արբիտրաժային դատարանն իր 2012թ. վճռում գտել է, որ առկա է անկողմնակալության, կողմերի կամքի ինքնավարության խախտում այն իրավիճակում, երբ քաղաքացիաիրավական պայմանագրի կողմերից մեկը կամ նրա հիմնադրած անձը հիմնում է այդ պայմանագրից ծագող վեճերը լուծող դատարան և ֆինանսավորում այն:¹⁴²

4.1.1. Անաչառության ձևակերպումը ՖԱ-ի օրինակով

Քանի որ ՖԱ-ն քննում է բանկերի և հաճախորդների միջև ծագած վեճերը, ընդունում կողմերի համար պարտադիր վճիռներ, պետք է կիրառի նաև արդար դատաքննության բոլոր փարբերը: Ելնելով ՖԱ-ի ստեղծման հիմնական նպատակներից՝ կարելի է ասել, որ դատարանները և ՖԱ-ն ձգտում են հասնել նույն նպատակին փարբեր մեթոդներով: Այդ պատճառով դատական համակարգում ապահովված երաշխիքները ՖԱ-ում ևս պետք է գործեն: Իսկ անաչառ արբիտրը կարող է հենց այդպիսի երաշխիքներից մեկը լինել:

Օրենքում և ՖԱ-ի Կանոնադրությունում¹⁴³ անաչառությունը նշված է որպես արբիտրաժի հիմնական սկզբունքներից մեկը: Օրենքը նաև ուղղակի նշում է այն որպես արբիտրին բացարկ հայտնելու հիմք: Սակայն իրավական կարգավորման և գործնական կիրառության միջև կա բաց: Ստորև կներկայացվեն որոշ հարցադրումներ ՖԱ-ի անաչառության առնչությամբ:

¹⁴⁰ Անգլիայի արբիտրաժային ակտ (1996), Հոդված 24(1)(a): Հասանելի է <http://www.legislation.gov.uk/ukpga/1996/23/section/24/> Հղումը կատարվել է 10 փետրվարի 2014թ.: Անաչառության հանդեպ հիմնավոր կասկածը արբիտրին բացարկ հայտնելու հիմք է:

¹⁴¹ Gary Born, p 1470.

¹⁴² ПОСТАНОВЛЕНИЕ Президиума Высшего Арбитражного Суда Российской Федерации № 16541/11 Москва 22 мая 2012 г. Հասանելի է http://arbitr.ru/bras.net/f.aspx?id_casedoc=1_1_7fcbc163-c0ee-4895-ba19-4f8020513ef8/ Հղումը կատարվել է 26 ապրիլի 2014: «Լուկոյլ» ԲԲԸ-ն հիմնել է արբիտրաժային դատարան: «Լուկոյլ» ԲԲԸ -ի դուստր ընկերություն հանդիսացող «ЛУКОЙЛ-ЭНЕРГОСЕТИ» ՍՊԸ-ի և «МК» ՍՊԸ-ի միջև ծագած վեճի լուծումը հանձնել են նշված արբիտրաժային փրիբունալին, ինչը ՌԴ Բարձրագույն արբիտրաժային դատարանը համարել է անաչառության խախտում:

¹⁴³ ՖԱ-ի կանոնադրություն, Կետ 3.1.

Հարցադրում 1. Արդյոք արբիտրների և բանկերի միջև աշխատանքային հարաբերություններն առաջացնում են կողմնակալության փայավորություն:

Ինչպես երևում է ՖԱ-ի արբիտրների կենսագրություններից, 10-ից 5-ը¹⁴⁴ փարբեր բանկերում զբաղեցնում են բարձր պաշտոններ:¹⁴⁵ ՖԱ-ի նախագահն այսպիսի կապը հիմնավորում է նրանով,¹⁴⁶ որ բանկերում գործածվում են հափուկ ծրագրեր, որոնց փիրապետում են բացառապես բանկի աշխատողները, իսկ իրավաբանները կամ այլ մասնագետները, չունենալով բանկային ոլորտի փորձ, չեն կարող հասկանալ այդ ծրագրերը: Բացի այդ, ՖԱ-ում քննված գրեթե բոլոր վեճերը ֆինանսական են, ուստի միայն բանկային ոլորտի փորձ ունեցող արբիտրը կարող է քննել դրանք: Մյուս կողմից՝ ՖԱ-ում գործում է արգելք առ այն, որ կողմերը չեն կարող ընտրել արբիտր քննելու այն վեճը, որը վերջինիս գործափու բանկի դեմ է:¹⁴⁷

Բացի այդ, ՖԱ-ի Կանոնադրությունը պահանջում է արբիտրից ունենալ բանկային ոլորտում փորձ, ինչը չի նշանակում միաժամանակ լինել բանկի աշխատող: Եթե ՖԱ-ն արբիտրաժային կենտրոն է, որն իրավունք ունի լսելու առևտրային հարաբերություններում ծագող վեճեր,¹⁴⁸ ապա բանկային ոլորտի փորձը կարող է և օգտակար չլինել ոչ բանկային ոլորտի վեճեր լսելիս: Մինչդեռ ըստ ՖԱ-ի նախագահի և Կանոնադրության՝ ներկայում կամ անցյալում բանկի աշխատող լինելը կարևոր և պարտադիր պահանջ է:¹⁴⁹

Չնայած ԱՄՆ դատարանների որոշումները ՀՀ օրենսդրության մաս չեն կազմում, դրանց վերլուծությունը կարող է օգտակար լինել ՀՀ օրենսդրության և ՖԱ-ի պրակտիկայի միջև առկա խնդիրները քննարկելիս: Հաշվի առնելով *Գոնսալեզի* և *Պարկ Պլազայի* կանոնները, ինչպես նաև ՄԻԵԴ-ի գնահատականները՝ անհրաժեշտ է որոշել՝ արդյոք բանկի աշխատող արբիտրների և այդ բանկերի միջև առկա է գործարար բնույթի հարաբերություն:

ՖԱ-ի արբիտրների կեսը բանկերի հիմնական աշխատողներ են և սփանում են վարձավորություն: Քանի որ նրանք ոչ թե մատուցում են ծառայություն բանկին, այլ համարվում են հիմնական աշխատող, կարելի է փաստել, որ նրանց միջև հարաբերությունները գործնական բնույթի են, ինչն էլ կարող է առաջացնել անաչառության փայավորություն: Տրամաբանական է, որ ողջամիտ ուսումնասիրողը կարող է կասկածել բանկի աշխատող-արբիտրի ներքին համոզման ու հօգուտ բանկային ոլորտի նախապայտվության հարցում: Այսինքն՝

¹⁴⁴ Հեղափոխությունն իրականացնելու ընթացքում արբիտրների թիվը 8-ն էր, որոնցից 6-ը փարբեր բանկերի բարձրաստիճան պաշտոններ էին զբաղեցնում: Սակայն այն հրապարակելու դրությամբ արդեն արբիտրների թիվը և հարաբերակցությունը փոխվել է. համապատասխանաբար 10:5-ի:

¹⁴⁵ ՖԱ-ի արբիտրների ցանկ, հասանելի է <http://uba.am/arbitration/arbstaff/?pageid=208&childid=211/> Հղումը կատարվել է 25 ապրիլի, 2014թ.:

¹⁴⁶ ՖԱ-ի նախագահի հեղ հարցազրույց

¹⁴⁷ Նույն տեղում

¹⁴⁸ ՖԱ-ի Կանոնադրություն, կետ 2.1

¹⁴⁹ ՖԱ-ի նախագահի հեղ հարցազրույց - ՖԱ-ի Կանոնադրություն, կետ 5.4

բանկի աշխատող–արբիտր հարաբերություններում առկա վստահությունն ու հավատը կարող են մտահոգություն առաջացնել արբիտրի անաչառության հարցում:

Ենթահարց 1. *Արդյոք բանկի աշխատողի և արբիտրի գործառույթները միահյուսվում են ՖԱ-ի արբիտրների դեպքում:*

Արբիտրի և բանկի միջև գործառույթային և կազմակերպական կապը կարող է առաջացնել աչառության մտավախություն: Արտաքինից այն կարող է հիմնավորված թվալ, քանզի ՖԱ-ի արբիտրների կեսը բանկի աշխատողներ են:

Տարանջատելու համար այս երկու գործառույթները՝ ՖԱ-ում գործում է գործադու բանկի դեմ ուղղված վեճը լսելու արգելք: Սակայն իրավական տեսանկյունից այն ոչ մի տեղ արտացոլված չէ, չկա որևէ պահանջ կամ կարգավորում: Ավելին, ՖԱ-ի արբիտրներից մեկը, ի պատասխան մեր հարցման,¹⁵⁰ խնդրեց իր գործադու բանկի անունից ներկայացրած պատասխանները համարել իր որպես արբիտր ներկայացրած պատասխաններ:

Մինչդեռ *Սալովն ընդդեմ Ուկրաինայի* գործում ՄԻԵԴ-ը պահանջում է դատավորից ապահովել ընթացակարգային երաշխիքներ բացառելու համար օբյեկտիվ անաչառության հանդեպ կասկածները:¹⁵¹

Հարցադրում 2. *Արդյոք ՀԲՄ-ն որպես ՖԱ-ի հիմնադիր ունի երկրորդական շահ ՖԱ գործերում:*

Առևտրային կազմակերպություններն իրավունք ունեն ստեղծելու միություններ՝ պաշտպանելու/ներկայացնելու հիմնադրի գույքային շահերը:¹⁵² Հիմնարկի հիմնադիրը կրում է հիմնարկի պարտավորությունների համար պատասխանատվություն:¹⁵³

ՀԲՄ-ի անդամները բանկերն են, որոնք ստեղծել են ՀԲՄ-ն՝ իրենց շահերը պաշտպանելու համար: Հաշվի առնելով, որ ՀԲՄ-ն կրում է ՖԱ-ի պարտավորությունների համար պատասխանատվություն՝ կարելի է եզրակացնել, որ ՀԲՄ-ն հետաքրքրված է ՖԱ-ի պարշաճ գործունեության մեջ և կարող է միջամտել ՖԱ-ի գործողություններին:¹⁵⁴ Կամ հակառակը՝ ՖԱ-ն չի գործի ի վնաս իր հիմնադրի շահերի: Բացի այդ, ՀԲՄ-ն ստեղծվել է պաշտպանելու իր հիմնադիրների շահերը: Ուստի վստահությունն ու հավատը ՀԲՄ և ՖԱ հարաբերություններում, ինչպես նաև օրենսդրական ձևակերպումները թույլ են տալիս եզրակացնելու, որ ֆինանսական կազմակերպությունների կողմից ստեղծած հիմնարկի և այդ կազմակերպությունների միջև վեճերը լուծելիս ՖԱ-ն կարող է լինել կողմնակալ:

Հետևաբար, ՀԲՄ-ն կարող է ունենալ երկրորդական շահ ՖԱ-ի

¹⁵⁰ Հաշվի առնելով արբիտրների և բանկերի գործառույթների միջև առկա տարբերությունը՝ մշակվել են հարցերի տարբեր խմբեր, որոնք ուղղվել են բանկերին, արբիտրներին:

¹⁵¹ *Սալովն ընդդեմ Ուկրաինայի*, գործ. 65518/01, (ՄԻԵԴ, 06 դեկտեմբերի, 2005), պար.81:

¹⁵² ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, Հոդված 125

¹⁵³ ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, Հոդված 62-ի 4-րդ մաս:

¹⁵⁴ ՖԱ-ի Կանոնադրություն, կետ 6, 5.2., 5.3., ՖԱ-ի Կանոններ, կետ 14:

գործողություններում:¹⁵⁵

Հարկ է նշել, որ ՌԴ Բարձրագույն արբիտրաժային դատարանը մասնագիտորեն իրավիճակը գնահատել է որպես կողմնակալության դրսևորում:¹⁵⁶

Ենթահարց 1. *Արդյոք ՀԲՄ-ն ունի ազդեցություն ՖԱ-ի արբիտրների վրա:*

ՀԲՄ-ի խորհուրդն է որոշում, թե ով կարող է ընդգրկվել ՖԱ-ի արբիտրների ցանկում:¹⁵⁷ ՀԲՄ-ի խորհուրդն ընտրվում է Ընդհանուր ժողովի կողմից, որը կազմվում է Միության անդամների ղեկավարներից:¹⁵⁸ ՀԲՄ-ի խորհուրդն ունի լայն հայեցողություն հաստատելու, փոփոխելու ՖԱ-ի Կանոնադրությունը և Կանոնակարգը,¹⁵⁹ ինչպես նաև փոփոխելու արբիտրների ցանկը:¹⁶⁰

ՀԲՄ-ի խորհուրդը, կազմված լինելով Միության 21 անդամ-բանկերի բարձրաստիճան պաշտոնյաներից, հաստատում և փոփոխում է այն անձանց ցանկը, ովքեր լուծում են այդ բանկերի դեմ ուղղված վեճերը: Խորհրդի այս իրավասությունը կարող է կասկածի տեղիք տալ, որ արբիտրները կարող են նախապաշտոնյաներից փախչել հիմնադիրների շահերին: Քանի որ ՀԲՄ-ի շահն ու ազդեցությունը պարզաձև չափով տարանջատված չեն, կարելի է եզրակացնել, որ ՀԲՄ-ն կարող է ազդել ՖԱ-ի արբիտրների վրա:

Այս աշխատությանը առաջարկվող լուծումը հիմնվում է ՖԱ-ի արգելքի վրա: Մասնավորապես առաջարկվում է ՖԱ-ին ունենալ անաչառության չափանիշի մեկնաբանում և տեղադրել այն ՖԱ պաշտոնական կայքում: Հարկ է ընդգծել, որ գործում է արբիտրների սուբյեկտիվ անաչառության կանխավարկածը:¹⁶¹ Վերջում, առաջարկվում է ՖԱ-ի արգելքին տալ իրավական ձևակերպում և այն ներառել ՖԱ-ի Կանոնակարգում, որպեսզի վիճող կողմերը նախապես տեղեկացվեն, որ կողմերը ՖԱ-ի արբիտրների ցանկից չեն կարող ընտրել այն թեկնածուին, որը միաժամանակ վեճի կողմ հանդիսացող բանկի աշխատակից է:

Ամփոփելով այս ենթագլուխը՝ ներկայացվում են հետևյալ եզրահանգումները.

- Անաչառությունն արբիտրի ներքին համոզմունքն է: Սուբյեկտիվ անաչառության կանխավարկածը պետք է մեկնաբանել որպես երաշխիք, որը դժվար է շրջանցել:

¹⁵⁵ Ըստ ՖԱ-ի նախագահի՝ բոլոր քայլերը ձեռնարկվում են բացառելու համար ՖԱ-ի անաչառության հանդեպ կասկածները և ՀԲՄ-ի ազդեցությունը ՖԱ-ի նկատմամբ:

¹⁵⁶ Տես ծանոթագրություն 142, ըստ ՌԴ Բարձրագույն արբիտրաժային դատարանի վճիռ:

¹⁵⁷ ՖԱ-ի Կանոնադրություն, կետ 5.3.: Հասանելի է <http://uba.am/upload/1073.pdf/> Հղումը կատարվել է 5 նոյեմբերի 2013թ.:

¹⁵⁸ ՖԱ-ի պատմական ակնարկ: Հասանելի է <http://uba.am/about/board/?lang=EN&pageid=3&childid=117/> Հղումը կատարվել է 5 նոյեմբերի, 2013թ.:

¹⁵⁹ ՖԱ-ի Կանոնադրություն, կետ 6.3.1: Հասանելի է <http://uba.am/upload/1073.pdf/> Հղումը կատարվել է 24 նոյեմբերի, 2013թ.

¹⁶⁰ Նույն տեղում

¹⁶¹ Տե՛ս ծանոթագրություն 123

- Անաչառության փարրերն են.
 - արբիւորների և կողմերից մեկի միջև գործարար, ներառյալ աշխատանքային, հարաբերությունների բացառում,
 - հնարավոր կողմնակալության փափաւորութուն,
 - վստահութուն/հավատ:
- Օրենքը միայն նախատեսում է արբիւրի անաչառութունը և չի սահմանում երաշխիք կամ գործնական կիրառման պահանջներ: ՖԱ-ի Կանոնադրութունը նույնպէս չի սահմանում անաչառութւան չափանիշները: Մինչդեռ գործնականում կիրառում է:
- Առաջարկվում է ներառել կիրառվող պահանջները ՖԱ-ի Կանոնադրութունում կամ Կանոնակարգում:
- Հասանելի դարձնել անաչառութւան մեկնաբանութունը ՖԱ-ի պաշտոնական կայքի միջոցով:

4.2. Արբիւրի անկախութունը

Ինչպէս կներկայացվի ստորև, արբիւրի անաչառութունը և անկախութունը սերտորեն կապված են: Որոշ օրենսդրութուններում երկու պահանջներն էլ նախատեսված են,¹⁶² որոշներում էլ՝ միայն անկախութունն է ընդգրկված:¹⁶³

Փարիզի վերաքննիչ դատարանը մեկնաբանել է անկախութունը որպէս «արբիւրի՝ ամենաեական հարկանիշներից մեկը»:¹⁶⁴ Ըստ դրա՝ որոշ դեպքերում նյութական կապը արբիւրի և կողմերից մեկի միջև կարող է դրդել արբիւրին լինելու կողմնակալ:¹⁶⁵

Անգլիական մեկնաբանութւամբ անկախութունը կապակցված է անաչառութւան հետ, քանի որ անկախութունը կարող է դիւրվել արբիւրին բացարկ հայրնելու առանձին հիմք, եթե բացակայում է անաչառութւան հանդէպ հիմնավոր կասկածը: Հակառակ դեպքում գործում է անաչառութւան չափանիշը:¹⁶⁶

ՈՒՆՍԻՏՐԱԼ կանոնների վերջին մեկնաբանութունը սահմանում է, որ անաչառ արբիւրը չի գործում հօգուտ կողմերից մեկի, իսկ անկախ արբիւրը չի ղեկավարվում կողմերից մեկի կամքով:¹⁶⁷

Ըստ որոշ մասնագետների՝ անկախութւան և անաչառութւան

¹⁶² ԱՄՆ արբիւրաժային ֆեդերալ ակտ, Անգլիական արբիւրաժային ակտ

¹⁶³ Ֆրանսիայի նոր քաղաքացիական դատավարութւան օրենսգիրք

¹⁶⁴ Gary Born , էջ 1471-1472

¹⁶⁵ Նույն տեղում

¹⁶⁶ Նույն տեղում, էջ 1474

¹⁶⁷ Նույն տեղում, ծանոթագրութուն 620

տարբերությունը չափազանց քիչ է. արտաքին հարաբերությունները և կապերը (ֆինանսական, մասնագիտական, աշխատանքային) անկախության տարրեր են,¹⁶⁸ իսկ անաչառության համար պետք է գնահատել արբիտրի սուբյեկտիվ կողմնակալությունը և նախատրամադրվածությունը կողմերից մեկի հանդեպ:¹⁶⁹

Որոշ փաստական հանգամանքներ ընդունված են որպես կողմնակալության կամ կանխակալության կասկած առաջացնող հիմքեր: Դրանք են.

ա) *Կողմերից մեկի աշխատակիցը լինելը* կարող է հանգեցնել անկախության պակասի:¹⁷⁰

բ) *Կողմերից մեկի հետ գործարքի մեջ գտնվելը*¹⁷¹ անգամ անուղղակի առևտրային կամ ֆինանսական կապերը, կարող են անկախությունը կասկածի ենթարկել և հիմք դառնալ արբիտրին փոխարինելու կամ բացարկ հայտնելու համար:¹⁷²

գ) *Արբիտրի հարցազրույցները* կողմերի հետ և կողմերից միայն մեկի հետ *հաղորդակցությունը*:¹⁷³ Նախքան արբիտր նշանակվելը ցանկացած քննարկում, հարցազրույց վեճի բովանդակության վերաբերյալ կրկին կասկածի են ենթարկում այդ արբիտրի անկախությունը: Նախքան նշանակվելը միայն արբիտրի հասանելիությանը, փորձին և շահերի բախման բացակայությանը վերաբերող հարցեր կարելի է քննարկել:¹⁷⁴ Որոշ արբիտրաժային կենտրոններում կողմերից միայն մեկի հետ հաղորդակցությունը հանգեցնում է կախվածության:¹⁷⁵

¹⁶⁸ Joseph F. Morrissey and Jack M. Graves 2013, p. 363

¹⁶⁹ Նույն տեղում- Martin F. Gusy, James M. Hosking, Franz T. Schwarz, (2011) A Guide to the ICDR International Arbitration Rules. էջ 88:

Հասանելի է http://books.google.am/books?id=vNveGO1wcDsC&pg=PA87&lpg=PA87&dq=iba+guidelines+explanation+to+general+standards&source=bl&ots=T8GWYeNEsY&sig=6tj-tdJel8ANp8VqfPEEzjSJTPk&hl=en&sa=X&ei=8qIZU5zTGsOJyAO3q4GADQ&redir_esc=y#v=onepage&q=iba%20guidelines%20explanation%20to%20general%20standards&f=false/ Հղումը կատարվել է 7 մարտի, 2014թ.:

¹⁷⁰ Gary Born ICDR Guidelines, p 1474

¹⁷¹ Gary Born, էջեր 1515-1520

¹⁷² Joseph F. Morrissey and Jack M. Graves. International Sales Law and Arbitration, Kluwer Law International BV, The Netherlands – 2013. p. 363, Gary Born, էջ1519-1520.

¹⁷³ International Bar Association, Rules for Ethics of International Arbitrators, Article 5.1: Հասանելի է file:///D:/My%20Documents/Downloads/publications_Ethics_arbitrators.pdf / Հղումը կատարվել է 17 հունվարի 2014թ- American Arbitration Association, The Code of Ethics for Arbitrators in Commercial Disputes, Canon III (b). Available at https://www.adr.org/aaa/faces/arbitratorsmediators/aboutarbitratorsmediators/codeofethics.jsessionid=2hJQTn2GvhpNhxXTzp0W780TndR96GI2TCW8BPnNrhQCPGC66T6!1121530366?_afLoop=1079052231457952&_afWindowMode=0&_afWindowId=null#%40%3F_afWindowId%3Dnull%26_afLoop%3D1079052231457952%26_afWindowMode%3D0%26_adf.ctrl-state%3D17iml9sh5j_4/ Հղումը կատարվել է 17 հունվարի 2014թ.

¹⁷⁴ Նույն տեղում

¹⁷⁵ Նույն տեղում- Joseph F. Morrissey and Jack M. Graves. International Sales Law and Arbitration, Kluwer Law International BV, The Netherlands – 2013. p. 359

4.2.1. ՖԱ-ի արբիտրների անկախությունը

Օրենքը նախատեսում է արբիտրների անկախությունը որպես արբիտրին բացարկ հայտնելու հիմք, իսկ ՖԱ-ի Կանոնադրությունը՝ որպես արբիտրաժի սկզբունք:¹⁷⁶ Սակայն դրա կիրառման ոչ մի կարգավորում չկա:

Աշխատանքային հարաբերություններ. Ինչպես արդեն նշվել է, ՖԱ-ի արբիտրներից հինգը ներկայիս բանկի աշխատողներ են: ՖԱ-ի արբիտրները, որոնք միաժամանակ բանկային աշխատողներ են, կարող են հակված լինել վեճերը լուծել հոգուր բանկային համակարգի:

Զգալի գործարար հարաբերությունները. Գործնականում բանկերը միմյանց մրցակիցներ են: Նրանք իրենց եկամուտն ստանում են հաճախորդներին մատուցած ծառայություններից: Մյուս կողմից վեճ ծագելու դեպքում, բնական է, որ բանկը կձգտի թաքցնել այն իր մրցակցից: Բացի այդ, բանկերը չեն կարող հրապարակել բանկային գաղտնիքները: Մինչդեռ ՖԱ-ի արբիտրը, որը միաժամանակ այլ բանկի աշխատող է, ծանոթանում է վեճի նյութերին, որոնք կարող են պարունակել բանկային գաղտնիք: Իսկ ինչպե՞ս կարող է բանկը վստահել այն անձի չեզոքությանը, որը միաժամանակ իր մրցակցի աշխատողն է: Ինչպիսի՞ երաշխիք է տրվում բանկերին առ այն, որ արբիտրի թեկնածու-բանկի աշխատողը կգործի անկախ և չի օգտագործի վիճող բանկի բանկային գաղտնիքը, ներքին ֆինանսական վիճակն իր դեմ:

Արբիտրի հարցազրույցները և կողմերից միայն մեկի հետ հաղորդակցությունը. Ըստ անցկացված հարցազրույցների¹⁷⁷ ո՛չ ՖԱ-ն, ո՛չ էլ բանկերը չունեն մշակված կանոններ, թե ինչպես են շփվելու արբիտրի հետ նախքան նրան ընտրելը և ընտրելուց հետո: Բանկերից մեկի ներկայացուցչի հավաստմամբ՝ ՖԱ-ի արբիտրների հետ շփվում են բանկի իրավաբանները, որոնք որակյալ մասնագետներ են և նմանապիպ ցուցումների կարիքը չունեն: Այս պարզ համոզումը պետք է նախ հիմնավորվի, քանի որ բանկի և արբիտրի միջև առկա հարաբերությունները տարբերվում են իրավաբան-հաճախորդ հարաբերություններից: Մինչդեռ, հստակեցնելով արբիտրի հետ քննարկման ենթակա հարցերի շրջանակը, կարելի է նվազեցնել անկախության հանդեպ հավանական վտանգը:

¹⁷⁶ ՖԱ-ի Կանոնադրություն, կետ 3

¹⁷⁷ Հարցազրույցներ ՖԱ-ի նախագահի, այլ արբիտրների, բանկի ներկայացուցիչների, հաճախորդների և փաստաբանների հետ:

ԳԼՈՒԽ 5

ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՀԵՏ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՎ ԱՀ-ի ՎԻՃԱՐԿՈՒՄԸ

Սպառողները պարտադիր, պարտավորեցնող ԱՀ-ից խուսափելու համար ունեն երկու խոչընդոտ՝ ա) Օրենքը և բ) պայմանագրային իրավունքը:

ա) Արբիտրաժային համաձայնությունը. Համաձայն Օրենքի 7-րդ հոդվածի՝ կողմերի միջև պետք է գրավոր կնքված լինի արբիտրաժին դիմելու համաձայնություն:¹⁷⁸ ԱՀ-ն կարող է համարվել ուժը կորցրած, եթե ԱՀ-ն չի համապատասխանում արբիտրաժային օրենսդրությանը (օրինակ՝ եթե համաձայնագիրը գրավոր չէ), կամ պայմանագրային իրավունքի ընդհանուր սկզբունքների համաձայն՝ ԱՀ-ն անվավեր է¹⁷⁹ (հաջորդիվ կանդիդատանք այս հարցին): Եվ ընդհակառակը՝ արբիտրաժային դրույթները վավեր են, անդառնալի և կիրառելի այնպիսի հիմքերով, որոնք սահմանված են «ցանկացած պայմանագրի լուծման համար օրենքով սահմանված նորմերով»:¹⁸⁰

Համաձայն Օրենքի 8-րդ հոդվածի՝ դատարանը, որին հայց է ներկայացված այն վեճի վերաբերյալ, որի շուրջ առկա է ԱՀ, պարտավոր է կողմերից մեկի միջնորդության հիման վրա, որը բերվել է ոչ ուշ, քան վեճի էության շուրջ այդ կողմի առաջին հայտարարության ներկայացումը, հայցը թողնել առանց քննության, բացառությամբ, եթե գտնում է, որ այդ համաձայնությունն առ ոչինչ է, ուժը կորցրել է կամ չի կարող կատարվել:¹⁸¹ Ուստի, ԱՀ-ն բնույթով պայմանագրային է, և հետևաբար, «պայմանագիրը պետք է կատարվի»:¹⁸² «Անջատելիության դոկտրինի» իմաստով արբիտրաժային դրույթն ինքնին առանձին պայմանագիր է, ուստի պայմանագիրը վիճարկող կողմը չի կարող

¹⁷⁸ «Համաձայնությունը համարվում է գրավոր ձևով կնքված, եթե դա կատարվել է կողմերի ստորագրությամբ՝ մեկ փաստաթուղթ կազմելով, կամ կնքված է նամակներով, հեռադիպով, հեռագրով, էլեկտրոնային կամ այդպիսի համաձայնության ձևակերպումն ապահովող կապի այլ միջոցների օգտագործմամբ՝ հաղորդումներ փոխանակելու միջոցով կամ հայցի ու պատասխանի վերաբերյալ հաղորդումների փոխանակմամբ, որտեղ մի կողմը վկայակոչում է արբիտրաժային համաձայնության առկայությունը, իսկ մյուս կողմը չի առարկում դրա դեմ: Պայմանագրում կատարված հղումը այնպիսի փաստաթղթին, որը պարունակում է արբիտրաժային վերապահում, համարվում է արբիտրաժային համաձայնություն այն պայմանով, որ պայմանագիրը կնքված է գրավոր ձևով, և փյալ հղումը այնպիսին է, որ նշված վերապահումը դարձնում է պայմանագրի մաս: Արբիտրաժային համաձայնությունը համարվում է գրավոր ձևով կնքված նաև, եթե արբիտրաժային համաձայնության մասին մի կողմի գրավոր առաջարկությունը որևէ ձևով ընդունել է մյուս կողմը»: Օրենք, Հոդված 7, 2-րդ կետ:

¹⁷⁹ How to Arbitrate in Armenia, article հասցանելի է <http://law.aua.am/files/2012/02/How-to-Arbitrate-in-Armenia.03-07.pdf> հղումը կատարվել է 24 փետրվարի 2014թ.

¹⁸⁰ Joanna Harrington, To Litigate or Arbitrate-No Matter-The Credit Card Industry Is Deciding for You, 2001, J. Disp. Resol. (20001). Հասնելի է <http://scholarship.law.missouri.edu/jdr/vol2001/iss1/7/> Հղումը կատարվել է 24 փետրվարի 2014թ.

¹⁸¹ ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգիրք, հոդվածներ. 91, 92, 103.

¹⁸² Joanna Harrington, at page 6

միննույն ժամանակ վիճարկել արբիտրաժային դրույթը: Հեյնսաբար, կողմի՝ հայցն առանց քննության թողնելու և գործն արբիտրաժի քննությանը հանձնելու միջնորդությամբ դատարանը կարող է միայն քննարկել, թե արդյոք արբիտրաժային դրույթը կիրառելի է:¹⁸³

բ) Միանալու պայմանագրեր. Ինչպես նշվեց վերևում, ԱՀ-ն կարող է անվավեր ճանաչել արբիտրաժային օրենսդրության պահանջների խախտմամբ կնքված լինելու դեպքում կամ եթե ՀՀ օրենսդրության համաձայն, անվավեր է: Հեյնսաբար այս հիմքերի ամփոփումն է:¹⁸⁴

- հայտնի կողմերից մեկը անգործունակ էր (սահմանափակ գործունակ) կամ գործարքի կնքման պահին ընդունակ չի եղել հասկանալու իր գործողությունների նշանակությունը կամ դեկլարելու դրանք,
- արբիտրաժային համաձայնագիրը էական նշանակություն ունեցող մոլորություն, խաբեության, խարդախության, սպառնալիքի կամ իրավազանցման արդյունք էր:

Միանալու պայմանագրերը ներկայացվում են «ընդունի՛ր կամ հեռացի՛ր հիմքով» սկզբունքով: Այսպիսի պայմանագրերը իրավունքի մասնագետների կողմից արժանացել են հափուկ ուշադրության, որովհետև դրանք չեն հետևում պայմանագիր կազմելու ընդհանուր կանոններին, քանի որ միացող կողմը (գրեթե բոլոր դեպքերում) բանակցելու հնարավորություն չունի:¹⁸⁵

Բանկային պայմանագրերը ստանդարտ պայմանագրեր են կամ «միանալու պայմանագրեր են»,¹⁸⁶ որին միացող կողմն իրավունք ունի պահանջել լուծելու կամ փոփոխելու պայմանագիրը, եթե միանալու պայմանագիրը, չհակասելով օրենքին և այլ իրավական ակտերին, միացող կողմին զրկում է նման փեսակի պայմանագրերով սովորաբար տրամադրվող իրավունքներից, բացառում կամ սահմանափակում է մյուս կողմի պատասխանատվությունը պարտավորությունները խախտելու համար կամ պարունակում է միացած կողմի համար այլ ակնհայտ ծանր պայմաններ, որոնք նա, ելնելով ողջամտորեն գիտակցված իր շահերից, չէր ընդունի, եթե հնարավորություն ունենար մասնակցել պայմանագրի պայմանների որոշմանը: Նշված հանգամանքների կապակցությամբ պայմանագիրը լուծելու կամ փոփոխելու մասին սպառողի ներկայացրած պայմանները ենթակա չեն բավարարման, եթե միացող կողմը

¹⁸³ Օրենքի 8-րդ հոդված, մաս 1-ին՝ «Դատարանը, որին հայց է ներկայացված այն վեճի վերաբերյալ, որի շուրջ առկա է արբիտրաժային համաձայնություն, պարտավոր է կողմերից մեկի միջնորդության հիման վրա, որը բերվել է ոչ ուշ, քան վեճի էության շուրջ այդ կողմի առաջին հայտարարության ներկայացումը, հայցը թողնել առանց քննության, բացառությամբ, եթե գտնում է, որ այդ համաձայնությունն առ ոչինչ է, ուժը կորցրել է կամ չի կարող կատարվել»:

¹⁸⁴ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի Գլուխ 18, §2. Գործարքների անվավերությունը

¹⁸⁵ Joanna Harington, at page 109

¹⁸⁶ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 444 հոդվածի առաջին մաս. «Միանալու է համարվում այն պայմանագիրը, որի պայմանները կողմերից մեկը սահմանել է բանաձևային կամ այլ ստանդարտ ձևերով, իսկ մյուս կողմը դրանք կարող է ընդունել առաջարկվող պայմանագրին ամբողջությամբ միանալով»:

գիտեր կամ պետք է իմանար, թե ինչ պայմաններով է կնքում պայմանագիրը:¹⁸⁷

Հարկ է նշել, որ չնայած պայմանագրային իրավունքը կարող է օգտագործվել որպես անարդար գործարքներն անվավեր ճանաչելու միջոց, որոնք պարունակում են պարտադիր, պարտավորեցնող արբիտրաժային դրույթ, այն ներկայացվում է որպես արգելք, ճնշումը, խաբեությունը կամ չգիտակցվածությունը ապացուցելու բարդության պատճառով:¹⁸⁸

¹⁸⁷ Նույն պեղում. 444-րդ հոդվածի երկրորդ և երրորդ մասեր

¹⁸⁸ Joanna Harington, at page 109; Jean R. Sternlight (2001), Mandatory Binding arbitration and the Demise of the Seventh Amendment Right to a Jury Trial, 16 Ohio St. J. on Disp. Resol. 669.

ԳԼՈՒԽ 6

ԱՐՔԻՏՐԻՆ ԲԱՑԱՐԿ ՀԱՅՏՆԵԼԸ

Արբիտրաժային վարույթի ընթացքում կողմերը հնարավոր է կասկածներ ունենան արբիտրների անկախության և անաչառության հանդեպ, ուստի նրանց հնարավորություն է ընձեռված բացարկ հայտնել արբիտրներին:¹⁸⁹ Տարբեր իԱ կենտրոնների կանոններ¹⁹⁰ որպես արբիտրին բացարկ հայտնելու հիմք նախատեսում են ողջամիտ կասկածը անաչառության և անկախության նկատմամբ: Սահմանված են նաև այլ օբյեկտիվ հիմքեր՝ արբիտրին որակագրկելու համար:¹⁹¹

Ըստ ԱՄՊ-ի կանոնների¹⁹² սկզբում նախատեսված է արբիտրի պարտականությունը հայտնելու ցանկացած փաստ կամ իրողություն, որը կարող է կողմի մոտ կասկած առաջացնել նրա անկախության նկատմամբ: Այնուհետև վարույթի ընթացքում կողմը կարող է բացարկ հայտնել արբիտրի կանխակալության հիմքով այդ մասին հայտնելով կենտրոնի Քարտուղարությանը: Վերջնական որոշումը կայացնում է Արբիտրաժային դատարանը, որը վերադասության կարգով չի կարող բողոքարկվել:

Ըստ Թայվանի արբիտրաժի օրենքի՝ կողմը կարող է արբիտրին բացարկ հայտնել, եթե, ի թիվս այլ հիմքերի, ներկայում կամ անցյալում առկա են աշխատանքային կամ գործակալության հարաբերություններ:¹⁹³

6.1. Արբիտրին բացարկ հայտնելը ՀՀ օրենսդրության և ՖԱ-ի կանոնների շրջանակներում

Օրենքում արբիտրին բացարկ հայտնելու ընթացակարգը գրեթե չի փարբերվում քննարկված միջազգային կենտրոնների կարգավորումներից:¹⁹⁴ Հարկ է նշել, որ բացարկի մասին դիմումը քննվում է ԱՏ-ի, կամ Օրենքում նշված դատարանի կողմից:¹⁹⁵

ՖԱ-ի Կանոնակարգի համաձայն՝ արբիտրին բացարկ հայտնելու հիմքերը

¹⁸⁹ Gary Born, *International Commercial Arbitration*, Volume 1, 2009, Kluwer Law International, The Netherlands. pp 1552-1553; Radka Zahradnikova, *Challenge procedure in Institutional and Ad Hoc Arbitration under the New Regulation in the Revised UNCITRAL Arbitration Rules*. Czech (& Central European) Yearbook of Arbitration. 24 February 2014 - իԱ կենտրոններում բացարկի հստակ կանոններ են գործում և բացարկման գործընթացը վերահսկվում է կենտրոնի կողմից: Սրա նպատակը բացարկի միջոցով արբիտրաժային վարույթի անհարկի ձգձգումները բացառելն է:

¹⁹⁰ ICC Rules, LCIA Rules, UNCITRAL Rules.

¹⁹¹ Radka Zahradnikova, արբիտրի հատուկ որակավորումը, ազգությունը, սխալ վարքագիծը և ունակությունը (capacity)

¹⁹² ԱՄՊ կանոններ, 7-րդ և 11-րդ կետեր.

¹⁹³ Tiffany Huang and Amber Hsu. Taiwan cases; *The Baker and McKenzie International Arbitration Yearbook 2012-2013*; Juris, New York, p. 479.

¹⁹⁴ Օրենք, ՀՕ-55-Ն

¹⁹⁵ Նույն փետրում, հոդված 13.

երկուսն են՝

- ա) հիմքեր կան ենթադրելու, որ արբիտրն անձամբ, ուղղակի կամ անուղղակի կերպով շահագրգռված է վարույթի ելքով,
- բ) կողմերի միջև առկա համաձայնությամբ նախատեսված որակավորման բացակայությունը:¹⁹⁶

Ինչպես արդեն նշվեց, վարույթի ելքում շահագրգռվածություն ունենալն անաչառության փորձերից է: Ուստի ՖԱ-ի Կանոնակարգը բացարկյալ հիմքերը նեղացնում է՝ ընդունելով միայն անաչառությունը: Մյուս կողմից, ՖԱ-ի արբիտրների ցանկում ընդգրկված թեկնածուների՝ բանկերի ներկայիս աշխատող լինելու հանգամանքն առաջին հայացքից կարող է առաջացնել արբիտրի անաչառության/կախվածության հանդեպ կասկած: Ըստ Օրենքի՝ անկախության վերաբերյալ հիմնավոր կասկածը արբիտրին բացարկ հայտնելու հիմք է:¹⁹⁷ Հաշվի առնելով, որ ՖԱ-ի գործունեությունն իրականացվում է Օրենքի դրույթներին համապատասխան¹⁹⁸ կարելի է փաստել, որ արբիտրի անկախությունը կասկածի փակ դնող հանգամանքները ևս կարող են բացարկի հիմք հանդիսանալ առանց ՖԱ-ի Կանոնակարգում նախատեսված լինելու:

Ինչ վերաբերում է արբիտրների որակավորման հարցում կողմերի ունեցած համաձայնությանը, ապա խնդիրը հեփոյալում է. ՖԱ-ի Կանոնադրության 5.4 կետով սահմանված են ՖԱ-ի արբիտրների ցանկում ընդգրկվել ցանկացող անձանց ներկայացվող որակավորման չափանիշները: Եթե որպես բացարկյալ հիմք ընդունվում են այս չափանիշներն, ապա հստակ չէ, թե ինչ հիմքով է նշված որակավորումը բողոքարկվելու:

Մյուս կողմից, եթե բացարկի հիմքը վերաբերում է կողմերի միջև առկա պայմանագրով նախատեսված որակավորման այլ չափանիշներին, ապա կրկին հարց է ծագում, թե ինչպես վիճող կողմերը կընտրեն ՖԱ-ի արբիտրների ցանկում չընդգրկված, այլ որակավորում ունեցող անձի՝ ՖԱ-ի անունից հանդես գալու որպես արբիտր:¹⁹⁹ Այսինքն՝ այս հիմքով բացարկի հնարավորությունը գործնականում կկիրառվի, եթե կողմերը կարողանան ՖԱ-ի ցանկում չընդգրկված անձին ընտրել արբիտր:

Ըստ ՖԱ-ի Կանոնակարգի 14.4 կետի՝

1. Եթե բացարկ հայտնած արբիտրը չի ընդունում ինքնաբացարկը, *ապա բացարկի դիմումը քննում է՝*
 - ՖԱ-ի նախագահը, միանձնյա փոփոխմանի դեպքում, եթե միանձնյա արբիտրը ՖԱ-ի նախագահը չէ,
 - փոփոխմանի մյուս անդամները, կամ ՖԱ-ի նախագահը՝ մյուս

¹⁹⁶ ՖԱ-ի Կանոնակարգ, կետ 14.1.

¹⁹⁷ Օրենք, հոդված 12, 2-րդ մաս:

¹⁹⁸ ՖԱ-ի Կանոնադրություն, կետ 1.2

¹⁹⁹ Ըստ ՖԱ-ի նախագահի՝ ՖԱ-ի արբիտրների ցանկում չընդգրկված անձը չի կարող կողմերի համաձայնությամբ ՖԱ-ի անունից լուծել վեճը:

անդամների անհամաձայնության դեպքում:

ՖԱ-ի նախագահի՝ բացարկի այս երկու հարցերը որոշելու լայն լիազորություններ կարող են առաջացնել վերջինիս անաչառության կասկած, հաշվի առնելով, որ նա նշանակվում է ՀԲՄ-ի Խորհրդի կողմից:²⁰⁰

2. Եթե բացարկը ներկայացվում է ՖԱ-ի նախագահին, ապա բացարկի հարցը որոշում են փոփոխության մյուս անդամները: Եթե միանձնյա փոփոխության արբիտրը ՖԱ-ի նախագահին է, կամ եթե ԱՏ մյուս անդամները համաձայնության չեն գալիս բացարկի հարցում, ապա նրա բացարկի հարցը որոշում է ՀԲՄ-ի Խորհուրդը:

Այս պարագայում ևս անաչառության կասկածը պահպանվում է:

*Արբիտրի բացարկը քննելու քննելու հաջորդ հարթակը դադարանն է:*²⁰¹ Մինչ դադարանը քննում է բացարկի վերաբերյալ որոշում ընդունելու դիմումը, փոփոխությանը շարունակում է քննել վեճը:²⁰²

Ըստ ՖԱ-ի Կանոնակարգի 14.5 կետի՝ մինչ դադարանը լսում է արբիտրի բացարկի հարցը, ԱՏ-ն շարունակում է արբիտրաժային վարույթը և կարող է վճիռ կայացնել: Անորոշ է այն հարցի պարասխանը,²⁰³ թե ինչ հետևանք կարող է ունենալ այն փոփոխության վճիռը, որի անդամին կամ նրանցից մեկին հայրնած բացարկը դադարանը բավարարի: Այսպիսի իրավիճակի իրավական կարգավորումը բացակայում է և՛ Օրենքում, և՛ ՖԱ-ի Կանոնակարգում: Մինչդեռ հավանականությունը, որ այն կառաջանա ՖԱ-ի վճիռների դեպքում ավելի մեծ է, քանի որ ՖԱ-ում գործի քննությունը տևում է ընդամենը մեկ ամիս:²⁰⁴

Հարկ է նշել, գործնականում ՖԱ-ի արբիտրի բացարկի հարց գրեթե չի քննարկվել:²⁰⁵ Սակայն դժգոհ/անբարեխիղճ կողմը միգուցե փորձի ձգձգել փոփոխության վճիռ կայացնելու գործընթացը, եթե բացարկման նպատակով անցնի եռաստիճան դատական արյաններով:²⁰⁶ Մինչդեռ բացարկման հիմքերի առկայության դեպքում արբիտրն առաջինը ինքը ինքնաբացարկ կհայտնի:²⁰⁷

Այսպիսով, ՖԱ-ի Կանոնակարգով արբիտրին բացարկ հայտնելու իրավական ընթացակարգը ևս խնդրահարույց է, չնայած, որ գործնականում դեռևս նման խնդիրներ չեն առաջացել:

²⁰⁰ ՖԱ-ի Կանոնադրություն, կետ 5.2

²⁰¹ ՖԱ Կանոնակարգ, կետ 14.5 - Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների առաջին արյանի դադարան; Օրենք, հոդված 6, Հայաստանի Հանրապետության Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին արյանի դադարանը:

²⁰² Օրենք, հոդված 13: ՖԱ-ի Կանոնակարգ, կետ 14.5.

²⁰³ Ոչ Օրենքը, ոչ էլ ՖԱ Կանոնակարգը չեն կարգավորում:

²⁰⁴ ՖԱ Կանոնակարգ, կետ 6.1

²⁰⁵ Հարցազրույցներ ՖԱ նախագահի, դատավորների հետ:

²⁰⁶ Դատավորի հետ հարցազրույց:

²⁰⁷ Նույն տեղում

ԳԼՈՒԽ 7

ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՏՐԻԲՈՒՆԱԼԻ ՎՃՌԻ ՃԱՆԱԶՈՒՄՆ ՈՒ ԿԱՏԱՐՈՒՄԸ

Դատական ակտերի արդյունավետ կատարումը ողջամիտ ժամկետում արդար դատաքննության իրավունքի անբաժան մասն է կազմում:²⁰⁸ Նույն պնդումը վերաբերում է նաև ԱՏ-ի վճիռներին:²⁰⁹

ԱՄՊ-ի կանոնների համաձայն՝ յուրաքանչյուր վճիռ ենթակա է պարտադիր կատարման կողմերի կողմից:²¹⁰

ՄԻԵԿ-ի նախադեպային իրավունքի համաձայն՝ արդար դատաքննության իրավունքը, ներառյալ դատարան դիմելու, դատարանում գործ հարուցելու իրավունքները, կկրեն ձևական բնույթ, եթե ներպետական օրենսդրական համակարգը թույլ փա, որպեսզի վերջնական, օրինական ուժի մեջ մտած պարտադիր դատական որոշումը մնա առանց կատարման՝ ի վնաս կողմերից մեկի: Անեռնակայելի կլինեք, եթե [ՄԻԵԿ-ի²¹¹] 6-րդ հոդվածի 1-ին պարագրաֆը մանրամասնորեն սահմաներ ընթացակարգային երաշխիքները՝ արդար, հանրային և արագ դատաքննությունը՝ առանց պաշտպանելու դատական որոշումների կատարումը: ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածը միայն դատարան դիմելու և դատաքննության իրավունքի տեսանկյունից դիտարկելը կարող է հանգեցնել մի իրավիճակի, որն անհամարելի է իրավունքի գերակայության սկզբունքի հետ:²¹²

ԵՆ Նախարարների կոմիտեն հաստատում է, որ անդամ պետությունները պարտավոր են երաշխավորել, որ վերջնական դատական վճիռ կամ որոշում ստացած ցանկացած անձ դրա կատարման իրավունք ունի: Նման վճռի չկատարումը կարող է անձին պարկանող այս իրավունքը դարձնել չգործող և ձևական բնույթ կրող: Համապատասխան օրենսդրությունը պետք է բավականաչափ մանրամասն կարգավորումներ պարունակի, որպեսզի ապահովի գործընթացի իրավական որոշակիությունը և թափանցիկությունը,

²⁰⁸ Recommendation Rec(2003)17 of the Committee of Ministers to member states on enforcement, Committee of Ministers of Council of Europe, 9 September 2003.

²⁰⁹ This recommendation applies to the enforcement of judicial decisions, as well as of other judicial or non-judicial enforceable titles.

²¹⁰ Արդար դատաքննության իրավունքը ենթադրում է, որ գործը քննվի օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ տրիբունալի կողմից (ՄԻԵԿ 6-րդ հոդված 1-ին մաս): Տրիբունալը ՄԻԵԿ-ի շրջանակներում ինքնավար նշանակություն (autonomous meaning) ունի (H. v. Belgium, §50-55): Տրիբունալ համարվելու համար պարտադիր չէ, որպեսզի մարմինը դատական համակարգի մաս կազմի (H. v. Belgium, §50-55): Օրենքի հիման վրա ստեղծված լինելը նշանակում է, որ դատական մարմինների գործունեությունը կախված չպետք է լինի գործադրի հայեցողությունից, այլ հիմնված լինի օրենքի վրա: Տրիբունալի անդամները պարտադիր չէ լինեն իրավաբաններ կամ որակավորված դատավորներ (Ettl v. Austria, §36-41): Բացի այդ, նման մարմինը պետք է պարտադիր վճիռներ ընդունելու լիազորություն ունենա (Sramek v. Austria, §36-42):

²¹¹ ԱՄՊ-ի կանոններ, 28 հոդված 6 մաս

²¹² ՄԻԵԿ

ինչպես նաև դարձնի այդ գործընթացը հնարավորինս կանխարեսելի:²¹³

Որոշ երկրների ներպետական օրենսդրությամբ նախարեսված են դատական և ոչ դատական, այդ թվում՝ արբիտրաժային վճիռների ճանաչման և կատարման ժամկետային սահմանափակումներ:²¹⁴ Որոշներում էլ դրանք բացակայում են:²¹⁵

Այն երկրներում, որտեղ արբիտրաժը՝ որպես վեճերը լուծելու այլընտրանքային միջոց, համեմատաբար կայացած է, նախարեսված չեն որևէ ժամկետային սահմանափակումներ արբիտրաժային վճիռները կատարելու համար, կամ եթե այդպիսիք սահմանված են (օրինակ՝ Մեծ Բրիտանիայում վեց տարի), դրանք չեն կարող սահմանափակել անձի կողմից իր օգտին կայացված վճռի կատարման հնարավորությունը՝ ի նկատի ունենալով նման ժամկետների ողջամիտ փոփոխությունը:

7.1. ՀՀ օրենսդրական կարգավորումները

ՖԱ-ի վճիռները կամավոր չկատարվելու դեպքում «դրանք ի կատար են ածվում հարկադիր կարգով՝ Օրենքին և միջազգային պայմանագրերին համապատասխան»:²¹⁶

Օրենքի 35-րդ հոդվածի համաձայն՝ «Արբիտրաժային փոփոխման վճիռը, որը կայացվել է Հայաստանի Հանրապետության տարածքում... պետք է ճանաչվի որպես պարտադիր և համապատասխան դատարանին գրավոր միջնորդելու դեպքում կատարվի սույն հոդվածին և 36-րդ հոդվածին համապատասխան»:²¹⁷ 36-րդ հոդվածը սահմանում է ԱՏ-ի վճռի կատարումը մերժելու հիմքերը:²¹⁷

Այսպիսով, համապատասխան դատարանը պետք է ճանաչի և պարտադիր կատարման համար կատարողական թերթ փրամադրի ԱՏ-ի վճիռը կատարելու

²¹³ Hornsby v. Greece, no. 18357/91 (ECtHR, 1997) պար. 44

²¹⁴ Recommendation Rec(2003)17 of the Committee of Ministers to member states on enforcement.

²¹⁵ UK Limitation Act 1980, Chapter 58, Art. 7. **Մեծ Բրիտանիայում** նախարեսված են որոշակի սահմանափակումներ արբիտրաժային փոփոխման վճիռը կատարելու համար: Մասնավորապես, վճիռը կարող է կատարման ներկայացվել վեց տարվա ընթացքում այն պահից, երբ այն պետք է կատարվեր; Арбитражный процессуальный кодекс РФ, (24.07.2002, ред. от 02.11.2013), ст. 321. **Ռուսաստանի Դաշնության** Արբիտրաժային ընթացակարգի մասին օրենսգրքի 321-րդ հոդվածը սահմանում է, որ կատարողական թերթը կարող է կատարման ներկայացվել դատական (ՌԴ Արբիտրաժային ընթացակարգի մասին օրենսգրքում «դատական» հասկացությունը օգտագործվում է արբիտրաժային դատարան իմաստով) ակտի ուժի մեջ մտնելուց հետո, կամ անմիջապես կատարման ենթակա դատական ակտի ընդունման հաջորդ օրվանից հետո երեք տարվա ընթացքում:

²¹⁶ Prof Dr Richard Kreindler, Dr Anna G. Tevini, Alexander Dolgorukow. Arbitration Guide.Germany, February 2012 - Գերմանիայում դատական և ոչ դատական, այդ թվում՝ արբիտրաժային վճիռների ճանաչումը և կատարումը որևէ ժամկետներով սահմանափակված չեն; Ontario's Limitations Act, 2002, Chapter 24, Art. 16 (1) - Կանադայում արբիտրաժային վճիռների կատարմանը, ապա այնտեղ գործող Սահմանափակումների ակտի համաձայն արբիտրաժային վճռի կատարմանն ուղղված ընթացակարգերն սկսելու կամ հարուցելու համար որևէ սահմանափակումներ չեն գործում:

²¹⁷ ՖԱ-ի Կանոնակարգ, կետ 33.3

համար, եթե առկա չէ վերոնշյալ հոդվածում տեղ գտած ճանաչումը կամ հարկադիր կատարումը մերժելու հիմքերից որևէ մեկը:

Դատական ակտերի հարկադիր կատարման մասին ՀՀ օրենքի (այսուհետ՝ ԴԱՀԿ օրենք) 23-րդ հոդվածի 2 կետի համաձայն՝ կատարողական թերթը «կարող է կատարման ներկայացվել մեկ տարվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ՝

1. օրինական ուժի մեջ է մտել դատական ակտը
2. արբիտրաժային փոփոխումները կայացրել է վճիռ...»:

Այսինքն՝ վերը նշված հոդվածից կարելի է հետևություն անել, որ, եթե որոշակի օբյեկտիվ պարզառոտերով կողմին, ում օգտին ԱՏ-ն վճիռ է կայացրել, չի հաջողվում ժամանակին՝ ԱՏ-ի վճիռ կայացնելուց հետո մեկ տարվա ընթացքում, վճիռը կատարելու համար կատարողական թերթ ձեռքբերել և այն ներկայացնել կատարման, ապա կողմը այսուհետ գրկվում է այդպիսի վճիռը կատարելու հնարավորությունից, ինչպես նաև այդ վճռով իր պաշտպանված, հաստատված կամ վերականգնված իրավունքներից օգտվելու և դրանք իրականացնելու հնարավորությունից: Իհարկե, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը նախատեսում է բացթողնված դատավարական ժամ վերականգնելու հնարավորություն,²¹⁸ սակայն նման որոշում կայացնելը թողնված է դատարանի հայեցողությանը և չի կարող համարվել վերը նկարագրված իրավիճակի

²¹⁸ Արբիտրաժային փոփոխումների վճռի ճանաչումը կամ հարկադիր կատարումը, որը կայացվել է ՀՀ տարածքում... կարող է մերժվել միայն՝

1) այն կողմի խնդրանքով, որի դեմ այն ուղղված է, եթե այդ կողմն ապացույցներ ներկայացնի դատարան, որտեղ հայցվում է վճռի ճանաչումը կամ հարկադիր կատարումը այն մասին, որ՝

ա) սույն օրենքի 7-րդ հոդվածով նախատեսված արբիտրաժային համաձայնության կողմերից մեկը, իր հանդեպ կիրառելի իրավունքի համաձայն, եղել է անգործունակ, կամ արբիտրաժային համաձայնությունը անվավեր է՝ կողմերի ընտրած իրավունքի կամ այդպիսին ընտրած չլինելու դեպքում՝ վճռի կայացման երկրի օրենսդրությամբ, կամ

բ) տվյալ կողմը պարզաձև ձևով տեղեկացված չի եղել արբիտրի նշանակման կամ արբիտրաժի մասին կամ այլ պարզառոտերով գրկված է եղել իր գործը ներկայացնելու հնարավորությունից, կամ

գ) վճիռ է կայացվել այնպիսի վեճի կապակցությամբ, որը նախատեսված չէր արբիտրաժային համաձայնությամբ կամ չի համապատասխանում նրա պայմաններին կամ որոշում է այնպիսի հարցեր, որոնք դուրս են արբիտրաժային համաձայնության սահմաններից, պայմանով սակայն, որ եթե արբիտրաժային համաձայնությամբ նախատեսված մասով կայացված որոշումները կարող են առանձնացվել այն որոշումներից, որոնք դուրս են արբիտրաժային համաձայնության սահմաններից, ապա կարող է չեղյալ ճանաչվել արբիտրաժային փոփոխումների վճռի միայն այն մասը, որը ներառում է արբիտրաժային համաձայնությամբ չնախատեսված հարցեր, կամ

դ) արբիտրաժային փոփոխումների կազմը կամ ընթացակարգը չի համապատասխանել կողմերի արբիտրաժային համաձայնությանը կամ նման համաձայնության բացակայության դեպքում չի համապատասխանել վճռի կայացման երկրի օրենսդրությանը,

ե) վճիռը դեռևս չի դարձել պարտադիր կողմերի համար կամ չեղյալ է ճանաչվել, կամ դրա կատարումը կասեցվել է այն պետության դատարանի կողմից, որտեղ կամ որի իրավունքին համապատասխան՝ կայացվել է այդ վճիռը, կամ

2) դատարանը պարզի, որ՝

ա) համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության՝ վեճի առարկան ենթակա չէ լուծման արբիտրաժի կողմից, կամ

բ) վճիռը հակասում է Հայաստանի Հանրապետության հանրային կարգին»:

միանշանակ և ամբողջական լուծում:

Արդարադատության պատշաճ իրականացումը ենթադրում է, որ դատարանների կամ արբիտրաժային վճիռների/որոշումների (եթե կողմերը վեճը հանձնել են ԱՏ-ի քննությանը) իրականացումը պետք է գործնականում լինի արդյունավետ, այլապես այն կկորցնի իր իմաստը ու նպատակը:

Կողմերը, Օրենքի 34-րդ հոդվածի համաձայն և սահմանված հիմքերով, կարող են վիճարկել ԱՏ-ի վճիռը այն ստանալուց **երեք ամսվա ընթացքում**: Այսինքն՝ կողմը կարող է ԱՏ-ի վճիռը չեղյալ ճանաչելու մասին դիմում ներկայացնել դատարան վճիռը ստանալուց հետո երեք ամսվա ընթացքում: Օրենսդրությամբ՝ ո՛չ Օրենքով և ո՛չ էլ Քաղաքացիական դատավարության օրենսգրքով, սահմանված չէ նման դիմումը քննելու հատուկ ժամկետներ: Օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն «եթե... դատարանին միջնորդություն է ներկայացվել վճիռը չեղյալ ճանաչելու կամ վճռի կատարումը կասեցնելու վերաբերյալ, ապա դատարանն, որտեղ հայցվում են վճռի ճանաչումը եւ հարկադիր կատարումը, կարող է իր հայեցողությամբ հետաձգել իր կողմից կայացվելիք որոշումն, ինչպես նաև վճռի ճանաչումը և հարկադիր կատարումը հայցող կողմի միջնորդության հիման վրա՝ պարտադրելով մյուս կողմին ներկայացնելու համազոր ապահովում»: Նման պարագայում, դատարանի կողմից վճռի ճանաչումը և հարկադիր կատարումը կասեցնելու դեպքում, կողմը, ում օգտին ԱՏ-ն կայացրել է վճիռ, պետք է սպասի մինչև դատարանը չեղյալ ճանաչելու մասին դիմումի վերաբերյալ որոշում կայացնի: Միայն դրանից հետո դատարանը կարող է համապատասխան որոշում կայացնել վճիռը ճանաչելու և հարկադիր կատարման համար թերթ փախու վերաբերյալ:

Նման հանգամանքների առկայության դեպքում հիմնավոր և հավանական վրանգ է ստեղծվում, որ, ի թիվս այլոց, արբիտրաժային վճիռը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմելու դեպքում արբիտրաժային վճիռը կատարելու համար նախատեսված ժամկետը՝ նման վճիռ կայացնելու պահից մեկ փարին, կարող է լրանալ: Նման հավանականությունը հատկապես մեծ է միջազգային առևտրային արբիտրաժի կայացրած վճիռները ՀՀ-ում կատարման ներկայացնելու դեպքում,²¹⁹ և մասնավորապես, եթե պատասխանողը մեկից ավելի երկրներում բռնագանձվելու ենթակա գույք ունի:

Եթե գործի քննությունը ԱՏ-ում կամ դատարանում իրականացվել է օրենքով նախատեսված բոլոր ընթացակարգերի պահպանմամբ, հիմնված է եղել արդար դատաքննության սկզբունքների վրա և արդյունքում կայացվել է համապատասխան վճիռ, սակայն որոշ օբյեկտիվ հանգամանքների պարճառով անհնար կամ դժվար է դառնում այդպիսի վճռի կատարումը, դա կարող է հանգեցնել բուն արդար դատաքննության խախտմանը և խաթարմանը: Բացի այդ, ԱՏ-ի վճռի կատարման ներկայացնելու մեկամյա սահմանափակումը միտված է վերացնելու վճռի կատարման անորոշությունն, որը իրականում պաշտպանում է այն կողմի շահերն, ում դեմ կայացվել է վճիռը և հետևաբար չի կարող դիտարկվել որպես հիմնավոր արդարացում:

Ինչպես արդեն վերը նշեցինք, ՀՀ գործող օրենսդրության պայմաններում,

²¹⁹ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին կետ

երբ ԱՏ-ի վճիռը ի կատար ածելու համար կատարողական թերթ ներկայացնելու ժամկետը՝ մեկ փարին, ձևավորված պրակտիկայի համաձայն, հաշվարկվում է արբիտրաժային վճիռը կայացնելու օրվանից, և Օրենքով երեք ամիս ժամկետ է նախատեսվում վճիռը չեղյալ ճանաչելու դիմում ներկայացնելու համար, հավանականություն է սպեղծվում, որ այդ ժամկետը կարող է լրանալ, կողմը՝ զրկվել իր օգտին, իր իրավունքների վերաբերյալ կայացված վճիռը ի կատար ածելու իրավունքից:

Ուսումնասիրելով օտարերկրյա որոշ երկրներում գործող օրենսդրական կարգավորումներն, որտեղ ԱՏ-ն որպես վեճերը լուծելու այլընտրանքային միջոց, համեմատաբար կայացած է, փեսնում ենք, որ այդ երկրներում նախատեսված չեն որևէ ժամկետային սահմանափակումներ արբիտրաժային վճիռները կատարելու համար, կամ եթե այդպիսիք սահմանված են (օրինակ՝ Մեծ Բրիտանիայում վեց փարի), դրանք չեն կարող սահմանափակել անձի կողմից իր օգտին կայացված վճիռն ի կատար ածելու հնարավորությունը՝ ի նկատի ունենալով նման ժամկետների ողջամիտ փոփոխությունը:

Ինչպես արդեն նշվել է, ԴԱՀԿ օրենքը սահմանում է, որ կատարողական թերթը առաջին անգամ «կարող է կատարման ներկայացվել մեկ փարվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ՝

1. օրինական ուժի մեջ է մտել դատական ակտը
2. արբիտրաժային փոփոխնալը կայացրել է վճիռ...»:

Այնպիսի իրավիճակից խուսափելու համար, երբ, օրինակ, ԱՏ-ի վճիռը չեղյալ ճանաչելու դիմում ներկայացնելու և դատական գործընթացի ձգձգման հետևանքով լրանում է նման վճիռը կատարման ներկայացնելու համար նախատեսված մեկ փարին, որը սկսում է հոսել ԱՏ-ի կողմից վճռի կայացման պահից, անհրաժեշտ է որոշակի փոփոխություններ մտցնել ՀՀ համապատասխան օրենսդրության մեջ: Մեկ այլ լուծում նման խնդրահարույց իրավիճակի համար կարող է հանդիսանալ դատարանների կողմից ԴԱՀԿ օրենքի լայն մեկնաբանությունը:

Այսպիսով, Օրենքի 35-րդ հոդվածին համաձայն «Արբիտրաժային փոփոխնալի վճիռը... պետք է ճանաչվի որպես պարտադիր և համապատասխան դատարանին գրավոր միջնորդելու դեպքում կատարվի սույն հոդվածին և 36-րդ հոդվածին համապատասխան»: ԴԱՀԿ օրենքի 19-րդ հոդվածը սահմանում է, որ ԱՏ-ի վճռի հարկադիր կատարման մասին դիմումի «քննության արդյունքներով դատարանը կայացնում է որոշում»: Իր հերթին ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 13-րդ հոդվածը դատական ակտերի շարքին է դասում, ի թիվս այլոց, դատարանի կողմից կայացրած որոշումները:

Ստացվում է, որ առաջին արտանի դատարանը, ճանաչելով ԱՏ-ի վճիռը և դրա կատարման համար կատարողական թերթ փրամադրելով, կայացնում է որոշում, որը ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի համաձայն դատական ակտ է: Այս հիմքով ԱՏ-ի վճռի կատարման համար կատարողական թերթ ներկայացնելու ժամկետը կարող է հաշվարկվել դատարանի կողմից նման վճիռը ճանաչելու և կատարողական թերթ փալու մասին որոշում կայացնելու

պահից՝ հիմնվելով ԴԱՀԿ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը 2-րդ կետի փոխարեն:

Անհրաժեշտ է նաև նշել, որ արբիտրաժային վճիռը ճանաչելու և կատարողական թերթ փախու մասին դատարանի որոշումը ենթակա չէ բողոքարկման վերաքննության կարգով, քանի որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 140¹ հոդվածի 2-րդ մասին համաձայն «ընդհանուր իրավասության դատարանի բողոքն ըստ էության չլուծող (միջանկյալ) դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել միայն սույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված դեպքերում»,²²⁰ այնինչ նման դատական որոշման դեմ բողոք բերելու հնարավորություն նախատեսված չէ ո՛չ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով, ո՛չ էլ այլ օրենքներով:

ՀՀ օրենսդրության նմանափայ մեկնաբանությամբ հնարավոր է ինչ-որ կերպ խուսափել վերը նշված իրավիճակներից, երբ անձանց իրավունքները սահմանափակման իրական վրանգ է ստեղծվում չընտրելով փյալ խնդիրը լուծելու նպատակով ՀՀ օրենսդրության մեջ փոփոխություններ մտցնելու եղանակը:

²²⁰ Տե՛ս թիվ ԵԿԴ/0024/16/12 քաղաքացիական գործով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 2014 թվականի մարտի 07-ի որոշումը, ինչպես նաև նույն գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի համապատասխան որոշումը:

ԳԼՈՒԽ 8

ԱՐՔԻՏՐԱԺԱՅԻՆ ՏՐԻԲՈՒՆԱԼԻ ՎՃՌԻ ՎԻՃԱՐԿՈՒՄԸ

Արբիտրաժային գործընթացին վերաբերող շատ կանոններ ԱՏ-ի վճիռը համարում են վերջնական²²¹ միևնույն ժամանակ սահմանելով այն սպառիչ հիմքերն, որոնց առկայության դեպքում հնարավոր է այն վիճարկել կամ չեղյալ ճանաչել: Անհրաժեշտ է շեշտել, որ ներպետական դատարանները ԱՏ-ի վճիռը չեն վերանայում ըստ էության, այլ իրավասու են ստուգելու դրա համապատասխանությունը սահմանված հիմքերին:

Տարբեր երկրների օրենսդրություններում,²²² ԻԱ-ի կանոններում,²²³ ինչպես նաև Օրենքում²²⁴ արտացոլված են Նյու Յորքի Կոնվենցիայով նախատեսված արբիտրաժային վճիռների կատարումը մերժելու հիմքերը, որոնցից կներկայացվեն մի քանիսը.

« ...բ) կողմը, ում դեմ վճիռ է կայացվել, պարզաձև ձևով փեղեկացված չի եղել արբիտրի նշանակման կամ արբիտրաժի մասին, կամ այլ պարզառոտ զրկված է եղել իր գործը ներկայացնելու հնարավորությունից,

գ) վճիռ է կայացվել այնպիսի վեճի կապակցությամբ, որը նախատեսված չէր արբիտրաժային համաձայնությամբ կամ չի համապատասխանում նրա պայմաններին, կամ որոշում է այնպիսի հարցեր, որոնք դուրս են արբիտրաժային համաձայնության սահմաններից, պայմանով, որ եթե արբիտրաժային համաձայնությամբ նախատեսված մասով կայացված որոշումները կարող են առանձնացվել այն որոշումներից, որոնք դուրս են արբիտրաժային համաձայնության սահմաններից, ապա կարող է չեղյալ ճանաչվել արբիտրաժային փոփոխման վճիռի միայն այն մասը, որը ներառում է արբիտրաժային համաձայնությամբ չնախատեսված հարցեր,

դ) արբիտրաժային փոփոխման կազմը կամ ընթացակարգը չեն համապատասխանել կողմերի արբիտրաժային համաձայնությանը, եթե այդ համաձայնությունը չի հակասում այն երկրի օրենսդրությանը, որտեղ անցկացվել է արբիտրաժը...»: ²²⁵

²²¹ ICC Rules, Art. 30; Code of Civil Procedure of Germany, Art. 1055; Code of Civil Procedure of Austria, Art. 607; և Swiss Civil Procedure Code, Art. 387, որը սահմանում է, որ վճիռի մասին փեղեկացվելուց հետո այն պարտադիր իրավական ուժ է ստանում և ենթակա է կատարման:

²²² Code of Civil Procedure of Austria, Art. 611; Code of Civil Procedure of Germany, Art. 1059; Ontario's Arbitration Act, 1991

²²³ UNICITRAL Arbitration Rules on International Commercial Arbitration (1985) with amendments as adopted in 2006, Art. 34.

²²⁴ Օրենք, 34-րդ հոդված

²²⁵ «Օտարերկրյա արբիտրաժային վճիռների ճանաչման և կատարման մասին» 1958թ. Նյու Յորքի կոնվենցիա

8.1. Վիճարկման ժամկետները

Սովորաբար արբիտրաժային վճիռների վերանայման համար արբիտրաժային կանոններով կամ վերանայումն իրականացնող դատարանի կիրառելի իրավունքով կարճ ժամկետներ են նախատեսվում:²²⁶

Գերմանիայի, Ավստրիայի քաղաքացիական դատավարության օրենսգրքերով, ինչպես նաև **ՌԻՆԻՍԻՏՐԱԼ կանոններով** նախատեսված է արբիտրաժային վճիռները որոշակի պայմանների առկայության դեպքում չեղյալ ճանաչելու մասին դիմում ներկայացնելու եռամսյա ժամկետ: **Ֆրանսիայի քաղաքացիական դատավարության օրենսգիրքը** նախատեսում է մեկամսյա ժամկետ վճռի մասին ծանուցվելուց հետո:²²⁷

8.2. ՀՀ-ում ԱՏ-ի վճռի վիճարկումը

Օրենքում ևս նախատեսված են վերոնշյալ հիմքերն, որոնց առկայության դեպքում նշված օրենքի 34-րդ հոդվածի համաձայն՝ ԱՏ-ի վճիռը կարող է վիճարկվել չեղյալ ճանաչելու մասին դիմում ներկայացնելու միջոցով: Սա վերաբերում է նաև ՖԱ-ի կողմից կայացված վճիռների վիճարկմանը:

Օրենքի 34-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Դատարանը, որին ներկայացվել է վճիռը չեղյալ ճանաչելու մասին դիմումը, կարող է կողմերից մեկի խնդրանքով կամ իր նախաձեռնությամբ որոշակի ժամանակով դադարեցնել այդ հարցի քննությունը, որպեսզի հնարավորություն ընձեռի արբիտրաժային փոփոխական վերսկսելու արբիտրաժային վարույթը կամ ձեռնարկելու այլ միջոցներ, որոնք ԱՏ-ի կարծիքով կարող են վերացնել ԱՏ-ի վճռի բեկանման հիմքերը»:

Շվեյցարիայի քաղաքացիական դատավարության օրենսգիրքը նախատեսում է, որ եթե դատարանը բավարարում է արբիտրաժային վճիռը վիճարկելու մասին պահանջը, այն չեղյալ է հայտարարում այդ վճիռը և վերադարձնում արբիտրաժային փոփոխական նոր վճիռ կայացնելու համար:²²⁸

Գերմանիայի քաղաքացիական օրենսգրքի 1059-րդ 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ դատարանը նույնպես իրավասու է բեկանել արբիտրաժային վճիռը և վերադարձնել այն ԱՏ-ին: Բացի այդ նույն հոդվածի 5-րդ կետը նախատեսում է, որ արբիտրաժային վճռի բեկանումը կարող է հանգեցնել նրան, որ ԱՀ-ն առկա վեճի վերաբերյալ ևս մեկ անգամ ուժի մեջ մտնի: Ինչ վերաբերում է վերջին հարցի վերաբերյալ ՀՀ օրենսդրության կարգավորմանը, հարկ է նշել, որ առկա չէ որևէ նշում այն մասին, թե կողմերի միջև առկա ԱՀ-ն պահպանում է իրավական ուժը, եթե դատարանը բեկանում է արբիտրաժային վճիռը: Սյուս կողմից, Օրենքի 32-րդ 3-րդ մասը սահմանում է, որ «Արբիտրաժային փոփոխական լիազորությունները դադարում են արբիտրաժի ավարտի հետ միաժամանակ՝ սույն օրենքի 33-րդ հոդվածով և 34-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դրույթների հաշվառմամբ»:

Այսինքն՝ կարելի է հետևություն անել, որ 34-րդ հոդվածի 4-րդ մասով

²²⁶ Grant Hanessian, Lawrence W. Newman. *International Arbitration Checklists*.2009.Baker & McKenzie. 2nd edition

²²⁷ Arbitration Guide, France, March 2012, Alexis Mourre, CastaldiMourre & Partners

²²⁸ Swiss Civil Procedure Code, Art. 399

Ուսումնասիրելով դեպքում, երբ դատարանը բեկանում է ԱՏ-ի վճիռը, հնարավորություն ընձեռելով վերսկսել արբիտրաժային վարույթը, ԱՏ-ն շարունակում է իրականացնել իր լիազորությունները, որոնք կողմերն իրեն են շնորհել ԱՀ-ով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Սույն աշխատությամբ փորձ է արվել ՖԱ-ի զարգացման ոլորտում քաղաքականության նոր մոտեցումներ ներկայացնել:

Արբիտրաժը վեճերի լուծման այլընտրանքային, արդյունավետ և ընդունված միջոց է: Կարելի է փաստել, որ ՖԱ-ն ներկայումս ՀՀ-ում գործող դատարանին այլընտրանք հանդիսացող գործուն հարթակներից է և հասել է զգալի արդյունքների: Սակայն առկա են որոշ խնդիրներ, որոնք լուծելու համար անհրաժեշտ է կատարել փոփոխություններ ՖԱ-ի Կանոնակարգի ու Կանոնադրության մեջ և համապատասխանաբար՝ այդ կանոնների գործնական կիրառության և ՖԱ-ի քաղաքականության մեջ:

Առավել մտահոգիչ են հետևյալ հիմնահարցերը.

- միացման պայմանագրով արբիտրաժին համաձայնելը առանց բավարար կերպով ընկալելու ԱՀ-ից ծագող պարտավորությունները և իրավական հետևանքները խնդրահարույց է կողմերին ինքնուրույն և ազատ կամահայտնության տեսանկյունից:
- ՖԱ-ում արբիտր ընտրելիս կողմի ինքնավարությունը սահմանափակվում է, քանի որ կողմերը պարտադրվում են ընտրություն կատարել ՖԱ-ի կողմից առաջարկվող արբիտրների սպառնիչ ցանկից:
- Արբիտրի անաչառության և անկախության սկզբունքների պահպանմանն ուղղված ՖԱ-ի երաշխիքները բավարար չեն: Ըստ էության այս սկզբունքները նախատեսված են ՖԱ-ի Կանոնադրությամբ և Օրենքով, սակայն դրանց գործնական կիրառությունը արդյունավետության տեսանկյունից առերևույթ կարող է կասկածի տակ դրվել:
- ԱՏ-ի վճռի ճանաչման, կատարման, ինչպես նաև վիճարկման վերաբերյալ օրենդրական ներկայիս կարգավորումը և դրա կիրառման հետ կապված ձևավորված պրակտիկան կարող են հանգեցնել արբիտրաժի գործունեության անարդյունավետությանը:

Սույն հետազոտության արդյունքում կազմվել են արբիտրի էթիկայի կանոններ: Առաջարկվել են նաև արբիտրաժի մասին բանկերի հաճախորդների ծանուցման քաղաքականության լրամշակված տարբերակ, փոփոխություններ կատարել ինչպես ՖԱ-ի Կանոնադրության, այնպես էլ Կանոնակարգի մեջ:

Առաջարկվող լուծումները կարելի է ամփոփել հետևյալ կերպ.

- արբիտրաժի մասին հաճախորդներին ծանուցելիս ներկայացնել արբիտրաժի առանձնահատկությունները՝ շեշտելով, որ այդ համաձայնությամբ կողմերը հրաժարվում են դատարան դիմելու իրենց իրավունքից:

- ՖԱ-ի արբիտրների ցանկն ընդարձակել: ՖԱ-ի Կանոնադրությամբ արբիտրին ներկայացվող պահանջներից բանկային ոլորտի փորձը չօգտագործել որպես ՖԱ-ի արբիտրի՝ միաժամանակ նաև բանկի աշխատող լինելու հանգամանքը արդարացնող առավելություն: Վիճող կողմերին հնարավորություն տալ ընտրելու արբիտր ոչ ՖԱ-ի ցանկից, միաժամանակ պահպանելով այդպիսի թեկնածուի՝ ՖԱ-ի կողմից հաստատվելու իրավունքը,

- ՖԱ Կանոնադրությամբ կամ Կանոնակարգով սահմանել ՖԱ-ի արբիտրի կողմից իր գործադու բանկի դեմ վեճեր լսելու արգելքը;

- ՖԱ-ի կողմից տալ արբիտրի անաչառության և անկախության մեկնաբանումները, հասանելի դարձնել դրանք պաշտոնական կայքի միջոցով:

- Դատական ակտով ճանաչված ԱՏ-ի վճռի կատարման համար կատարողական թերթ ներկայացնելու ժամկետը առաջարկվում է հաշվարկվել դատարանի կողմից նման վճիռը ճանաչելու և կատարողական թերթ տալու մասին որոշում կայացնելու պահից, այսինքն՝ կիրառել ԴԱՀԿ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ 2-րդ կետի փոխարեն:

ԱՐՔԻՏՐԱԺԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԷՄՊԻՐԻԿ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Հաճախորդների հետ ֆինանսական ծառայությունների պայմանագրերի ստանդարտ ձևաթղթերի մեր ուսումնասիրությունը բացահայտում է, որ ֆինանսական կառույցների՝ հաճախորդների ֆինանսական/վարկային պայմանագրերում առկա է դեպի պարտադիր, պարտավորեցնող արբիտրաժային դրույթներ կիրառելու միտում:

Հեղազոտության մեթոդը

2013 թ. նոյեմբեր ամսից մինչև 2014թ. ապրիլ ամիսը մենք իրականացրել ենք հարցում 31 ֆինանսական կազմակերպություններում՝ նրանց պայմանագրերում փնտրելով պարտադիր արբիտրաժային դրույթներ: Մենք հատկապես ուշադրություն ենք դարձրել բանկերին և վարկային կազմակերպություններին: Այս ոլորտները համապատասխանում են մեր հետաքրքրության ոլորտին:

Ֆինանսական կազմակերպությունները պարահականության սկզբունքով չեն ընտրվել: ՀՀ տարածում գործող բանկերի և վարկային կազմակերպությունների վերաբերյալ տեղեկատվությունը հավաքել ենք ՀՀ Կենտրոնական բանկի պաշտոնական կայքից: Այնուհետև մենք սկսեցինք փնտրել բանկերի կողմից կազմված հաճախորդների պայմանագրեր՝ նամակ ուղարկելով բանկեր և խնդրելով հետևյալ տեղեկությունը.

1. Բանկն օգտվում է Հայաստանի բանկերի միության «Ֆինանսական արբիտրաժ» հիմնարկի (այսուհետ՝ ՖԱ) արբիտրաժային ծառայություններից.
 - Եթե ոչ, խնդրում ենք նշել պատճառները:
 - Եթե այո, խնդրում ենք նշել՝ օգտվում եք արդյոք ՖԱ-յի արբիտրաժից մշտական հիմունքներով, թե երբեմն նաև դիմում եք ՀՀ պետական դատարաններին բանկի շահերի պաշտպանության համար:
2. Խնդրում ենք նշել՝ որ դեպքերում է Ձեր բանկն առավելապես դիմում ՖԱ-ին (օր.՝ միայն վարկային պայմանագրերի դեպքում):
3. Խնդրում ենք նշել այն բոլոր ձևերը, որոնց միջոցով Բանկը կնքում է արբիտրաժային համաձայնություններ հաճախորդների հետ (օր.՝

արբիտրաժային համաձայնությունները ներառվում են պայմանագրում, կնքվում են առանձին փաստաթղթի տեսքով):

Արդյոք արբիտրաժային համաձայնությունների կնքման մասով կա որևէ տարբերակում ֆիզիկական և իրավաբանական անձանց նկատմամբ կիրառվող մոտեցումների միջև (օրինակ՝ իրավաբանական անձանց հետ արբիտրաժային համաձայնություն չի կնքվում կամ արբիտրաժային համաձայնությունը կնքվում է առանձին պայմանագրի տեսքով միայն և այլն):

4. Խնդրում ենք տրամադրել Բանկի կողմից կիրառվող արբիտրաժային համաձայնությունների բոլոր տիպային օրինակները: Եթե բանկը չի կիրառում արբիտրաժային տիպային համաձայնագրեր, խնդրում եմ տրամադրել արդեն իսկ կիրառված արբիտրաժային համաձայնությունների 7-10 նմուշային օրինակներ: Դրանք պայմանագրերում ներառված լինելու դեպքում, խնդրում ենք տրամադրել միայն համապատասխան հոդվածը:

Այս հոդվածում առկա տվյալները դյուրին չէր հավաքել: Շատ բանկեր չէին ցանկանում մասնակցել ուսումնասիրությանը, թեպետ տեղեկացված էին, որ հարցման պատասխաններն էապես կօգնեն մեզ իրականացնել պարզաձ ուսումնասիրություն, որի նպատակն է նպաստել մեր երկրում արբիտրաժի կայացմանը միջազգային չափանիշներին համապատասխան: Այնուհետև հարցմանը չմասնակցած բանկերի հետ հեռախոսային կապ հաստատեցինք: Եթե փորձերը արդյունք չէին տալիս, մենք պարբերաբար կրկնում էինք էլեկտրոնային նամակների ուղարկումը:

Էնպիրիկ արդյունքներ

Հիմնվելով մեր ուսումնասիրած տվյալների վրա՝ մենք եկանք հետևյալ եզրակացությանը՝

1. ՀՀ բանկերն, ինչպիսիք են «Արդշինինվեստբան»-ը, «Զարգացման Հայկական Բանկ Արմենիա»-ն, «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ»-ը, «Հայէկոնոմբանկ»-ը, «ՎՏԲ-Հայաստանբանկ» և «Ինեկոբանկ»-ը որոշ վարկային կազմակերպություններ (մեզ հայտնի են երկուսը՝ «Ֆարմ Կրեդիտ Արմենիա»-ն և «ՓՄՁ ներդրումներ» ՈւՎԿ-ն), կարևորելով ՖԱ-ի՝ որպես ՀՀ-ում գործող դատական համակարգի այլընտրանք, աջակցությունը ՀՀ գործող առևտրային բանկերին, վերջերս հաճախորդների հետ հարաբերություններում, մասնավորապես՝ վարկավորման, ֆինանսական գործունեություն իրականացնելու, անշարժ գույքի ձեռքբերման կամ վերանորոգման և այլ պայմանագրերում կատարել են փոփոխություններ և ներառում են արբիտրաժային վերապահում պայմանագրերի կապակցությամբ ծագած բոլոր վեճերը ՖԱ-ին հանձնելու վերաբերյալ, կամ այդպիսի համաձայնությունը կնքվում է առանձին փաստաթղթի ձևով ՖԱ-ի գործունեությունը՝ համարելով արդյունավետ:
2. Հարցմանը չեն պատասխանել «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ»,

«Առեկսիմբանկ - գազպրոմբանկի խումբ», «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ», «ԲԻԲԼՈՍ Բանկ Արմենիա», «Մեյլաթ Բանկ», «Յունիբանկ», «Պրոմեթեյ Բանկ» և «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ընկերությունները:

3. «Անելիք բանկ», «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան», «Կոնվերս Բանկ», «Համահայկական բանկ», «Պրոկրոդիտ Բանկ» ընկերություններն առայժմ չեն օգտվում ՖԱ-ի ծառայություններից՝ պայմանավորված այն հանգամանքով, որ (ա) արբիտրաժային համաձայնության կնքման և վեճն արբիտրաժային դատարանում լուծելու պրակտիկան համեմատաբար վերջերս է ներդրվել բանկում, (բ) նախընտրում են դիմել դատական պաշտպանություն, համարելով առավել արդյունավետ և ժամանակային տեսանկյունից՝ ավելի հարմար, (գ) գործերի քանակը շատ չէ, սակայն ապագայում նախատեսվում է օգտվել ՖԱ-ի ծառայություններից:
4. «ԲՏԱ Բանկ» և «Արմավիսբանկ» ընկերությունները հրաժարվել են հարցմանը մասնակցելուց՝ պատճառաբանելով, որ գրությամբ պահանջվող տեղեկատվությունը հանդիսանում է առևտրային գաղտնիք:
5. Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից պայմանագրերում ներառվող արբիտրաժային համաձայնագրերը համապատասխանում են ՀԲՄ «Ֆինանսական արբիտրաժ» հիմնարկի կողմից մշակված արբիտրաժային համաձայնության կայքում տեղադրված տիպային օրինակներին:
6. Վանաձորում իրականացված հարցումների արդյունքում պարզվել է, որ բանկերի մասնաճյուղերը չեն առնչվում ֆինանսական արբիտրաժին. «գլխամասն է զբաղվում արբիտրաժի հարցերով»:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՏՐՎՈՂ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՀԱՐՑԵՐ

Սույն հեփազոփության ընթացքում վարած հարցազրույցների ժամանակ յուրաքանչյուր թիրախային խմբերի համար կազմվել են օրինակելի հարցեր: Ստորև թվարկված ոչ բոլոր հարցերն են տրվել յուրաքանչյուր հարցազրույցի ընթացքում, ինչպես նաև նույն ձևակերպմամբ չեն ներկայացվել: Թվարկվածները հարցերի օրինակելի ձևեր են:

ՖԱ-ի արբիտրներ

1. Ինչպե՞ս ծագեց ՖԱ սպեղծելու գաղափարը:
2. Ովքե՞ր էին հիմնադիրներ:
3. Ինչու՞ Բանկերի միության կողմից:
4. Ո՞րն էր ՖԱ-ի նախնական նպատակը:
5. ՖԱ-ի գործունեությանը վերաբերող հարցեր
6. Ինչպե՞ս է ապահովվում ՖԱ-ի անկախությունը ՀԲՄ-ից:
7. Ինչպե՞ս է ապահովվում արբիտրի անաչառությունը:
8. Ինչպե՞ս է իրականացվում արբիտրի ընդգրկումը ՖԱ-ի արբիտրների ցանկում:
9. Ի՞նչ խնդիրներ կան ԱՏ-ի վճիռների ճանաչման և կատարման ընթացակարգում:
10. Ի՞նչ խնդիրներ կան ԱՀ-ն վիճարկելու ընթացակարգում:
11. Ի՞նչ խնդիրներ կան արբիտրին բացարկ հայտնելու ընթացակարգում:
12. Ի՞նչ խնդիրներ կան ԱՏ-ի վճիռը վիճարկելու ընթացակարգում:
13. Գործու՞մ են արբիտրի և կողմի միջև հաղորդակցությունը կարգավորող ՖԱ կանոններ:

Բանկի ներկայացուցիչներ

1. Բացատրու՞մ եք յուրաքանչյուր հաճախորդին արբիտրաժային վերապահման եությունը, բովանդակությունը:

2. Արբիտրի ո՞ր հատկանիշներն են ազդում արբիտրի ընտրության վրա՝ անաչառությունը, փորձը, կրթությունը, այլ – նշել:
3. Ի՞նչ ընթացակարգով եք հաղորդակցվում արբիտրի հետ նախքան նրան ընտրելը և ընտրելուց հետո:
4. Ունե՞ք հստակ սահմանված ընթացակարգ/ կանոններ, թե ինչպես եք արբիտրին ներկայացնելու վեճը: Արդյոք վեճի ելքային առնչվող հարցեր քննարկում են արբիտրի հետ, թե միայն նիստի վարման ընթացակարգային հարցեր են քննարկում արբիտրի հետ:

Բանկի հաճախորդներ

1. Բացատրե՞լ են Ձեզ արբիտրաժային վերապահման ելությունը, բովանդակությունը:
2. Պայմանագիրը ստորագրելուց որքանո՞վ էիք տեղյակ արբիտրաժին:
3. Գիտեի՞ք արդյոք՝ ինչ փարբերություն կա ՖԱ-ի և դատական ճանապարհով վեճերի լուծման մեթոդների մեջ:
4. Պայմանագիրը ստորագրելուց գիտակցու՞մ էիք, որ ՖԱ-ի վավերապայմանի հետ համաձայնվելով՝ հրաժարվում եք վեճը դատարանում քննելու իրավունքից:
5. Ի՞նչ խնդիրների եք բախվել արբիտրաժային վճռի հաստատման և կատարման ընթացքում:
6. Համարում եք արդյոք արբիտրաժային վճռի կատարման մեկամյա ժամկետը որպես ձեր իրավունքների (ո՞ր իրավունքների) սահմանափակում և արբիտրաժային որոշման կատարման համար խոչընդոտ:
7. Երբևէ բացարկ ներկայացրե՞լ եք արբիտրին: Ի՞նչ արդյունքի եք հասել:
8. Ի՞նչ հետևանք է թողել բացարկը արբիտրաժի գործընթացի վրա: Արդյոք դիմել եք դատարան՝ բացարկի վերաբերյալ որոշում ընդունելու խնդրանքով:
9. Արբիտրի ո՞ր հատկանիշներն են ազդում արբիտրի ընտրության վրա՝ անաչառությունը, փորձը, կրթությունը, այլ – նշել:
10. Ինչպե՞ս եք գնահատել ՖԱ-ի ցանկում ընդգրկված արբիտրների անկախությունը / անաչառությունը- հիմնվելով կենսագրության, ընկերների կարծիքի, ասեկոսների վրա, կամ այլ – նշել:
11. Ինչպե՞ս եք շփվել արբիտրի հետ նախքան նրան ընտրելը և ընտրելուց հետո – գրավոր, բանավոր, հարցազրույցների միջոցով, ներկայացնելով խնդրի լուծման Ձեր փարբերակը, բացատրել եք ապացույցի բովանդակությունը:

Դատավորներ

1. Ի՞նչ հիմքերով են ավելի հաճախ արբիտրին բացարկ հայտնում:
2. Ի՞նչ առավելություններ/թերություններ/առանձնահատկություններ կան միջազգային արբիտրաժային որոշման կատարման և ՀՀ ներպետական արբիտրաժային վճիռների կատարման ընթացակարգերում:
3. Համարում ե՞ք արդյոք արբիտրաժային վճռի կատարման համար նախատեսված մեկամյա ժամկետը որպես սահմանափակում կամ խոչընդոտ մասն վճռի կատարման համար:
4. Ինչպե՞ս է կարգավորվում դատական ծանուցումների խնդիրը: Ըստ ՄԻԵԴ վճիռների՝ դատավորը պարտավոր է պարզաձ ջանքեր գործադրել գտնելու կողմին, ծանուցելու նրան: Սակայն արբիտրը նման պարտականություն չունի: Ինչպիսի լուծում կառաջարկեք:
5. Հայցի ապահովման նպատակով ՖԱ-ն ընդունում է որոշում, որի կատարումն իրականացվում է դատական կարգով: Դատարանն ընդունում է այն որպես դիմում, ինչն ազդում է ՖԱ-ի արդյունավետության վրա: Ո՞րն է որպես դիմում ընդունելու տրամաբանությունը / քաղաքականությունը: Ի՞նչ լուծում կառաջարկեք:
6. Տեսնում ե՞ք խնդիր ՀՀ-ի համար արդար դատաքննության իրավունքի տեսանկյունից, եթե բանկերի հետ վեճերը լուծվեն միայն ՖԱ-ում:

Փաստաբաններ

1. Պաշտպանե՞լ եք Ձեր հաճախորդի շահերը ՖԱ-ում:
2. Ի՞նչ հիմքով եք բացարկ հայտնել արբիտրներին:
3. Քանի՞ անգամ է բավարարվել բացարկը: Բավարարվելու դեպքում արբիտրաժային վարույթը վերսկսվե՞լ է:
4. Արբիտրաժային վարույթը վերսկսելու դեպքում ինչպե՞ս եք ընտրել նոր արբիտրին:
5. Ի՞նչ խնդիրներ եք տեսնում ՖԱ-ում հաճախորդների իրավունքների խախտման/ պաշտպանության տեսանկյունից:
6. Արբիտրի անաչառության/ անկախության և ընտրության վերաբերյալ հարցերը նաև հարցաթերթով են նախատեսված:
7. Ի՞նչ խնդիրների եք հանդիպել արբիտրաժային վճռի հաստատման և կատարման փուլում:
8. Համարում ե՞ք արբիտրաժային վճռի կատարման համար նախատեսված մեկամյա ժամկետը արբիտրաժային վճռի կատարման համար որպես խոչընդոտ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ

1. ՀՀ Սահմանադրություն (փոփոխություններով), ընդունվել է 05.07.1995 ՀՀ հանրաքվեով
2. ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք, ՀՕ-247, 17.06.1998
3. «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենք, ՀՕ-55-Ն, ընդունվել է 25.12.2006
4. «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենք, ՀՕ-221, ընդունվել է 05.05.1998
5. «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենք, ՀՕ-197, ընդունվել է 26.01.2001
6. «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքը, ՀՕ-122-Ն, ընդունված է 2008 թվականի հունիսի 17-ին
7. Հայաստանի Բանկերի միության «Ֆինանսական արբիտրաժ» հիմնարկի կանոնադրություն (նոր խմբագրությամբ)՝ հաստատված ՀՀ բանկերի միության խորհրդի 2013թ.-ի 17 ապրիլի որոշմամբ
8. Ֆինանսական արբիտրաժային դատարանի կանոնակարգ (նոր խմբագրությամբ)՝ հաստատված ՀՀ բանկերի միության խորհրդի 2013թ. -ի ապրիլի 17 որոշմամբ:

ԱՅԼ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ

9. ԱՄՆ Արբիտրաժի ֆեդերալ ակտ - The United States Federal Arbitration Act (FAA)
10. Ավստրիայի քաղաքացիական դատավարության օրենսգիրք
11. Գերմանիայի քաղաքացիական դատավարության օրենսգիրք
12. Շվեյցարիայի քաղաքացիական դատավարության օրենսգիրք
13. Ֆրանսիայի նոր քաղաքացիական դատավարության օրենսգիրք
14. Մեծ Բրիտանիայի Սպառողական արբիտրաժի համաձայնության ակտ (1984)
15. Ֆինանսային արբիտրաժային դատարանի կանոնակարգ - Ontario's Limitations Act (2002)
16. Օնտարիոյի արբիտրաժային ակտ
17. UK Limitation Act (1980)
18. Арбитражный процессуальный кодекс РФ, (24.07.2002, ред. от 02.11.2013)

ԵՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ

19. Council Directive 93/13, Annex (1)(q), 1993 O.J. (L 95) 29)
20. Recommendation Rec (2003) 17 of the Committee of Ministers to member states on enforcement, Committee of Ministers of Council of Europe, 9 September 2003

ԵՄ կարգավորումներ

21. Unfair Terms in Consumer Contracts Regulations (1999), S.I. 1999/2083

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ԿԱՆՈՆՆԵՐ

22. AAA Code of Ethics
23. American Association of Arbitration Rules
24. Arbitration Guide, France (March 2012), Alexis Mourre, Castaldi Mourre & Partners
25. FINRA Rules (US)
26. International Bar Association, Ethics Rules
27. International Centre of Dispute Resolution (ICDR) Guidelines
28. ICDR Rules (US)
29. ICC Rules
30. JAMS Rules (US)
31. LCIA Rules
32. Կահիրեի ինստիտուտի առևտրային արբիտրաժի փարածաշրջանային կենտրոնի կանոններ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ

33. ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի բանաձև 31/98, ՄԱԿ-ի Միջազգային առևտրային իրավունքի հանաձևաժողով, ՈՒՆՄԻՏՐԱԼ կանոններ
34. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին» եվրոպական կոնվենցիա
35. «Օտարերկրյա արբիտրաժային վճիռների ձանաչման և կատարման մասին» Նյու Յորքի կոնվենցիա (1958)

ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ/ՎՃԻՌՆԵՐ

Ներպետական դատարաններ

36. ПОСТАНОВЛЕНИЕ Президиума Высшего Арбитражного Суда Российской Федерации № 16541/11 Москва 22 мая 2012 г
37. *Commonwealth Coating Corp. v. Cont'l Ca Co.*, 393 U.S. 145 (U.S. Ct. 1968)
38. County Court Jurisdiction Order S.I. 1981/1123 and County Courts Act 1984, c. 28 s. 17
39. *Gonzales v. Interinsurance Exchange of Automobile Club*
40. *Park Plaza, Ltd. v. Pietz* (1987) 193 Cal. App. 3d 1414 [239 Cal. Rptr. 51
41. *Philip Alexander Securities and Futures Ltd. v. Bamberger & Or.*, [1996] NLOR No 3684 (Court of Appeal – Civil Division).
42. *Scherk v. Alberto-Cuerver Co.*, 417 U.S. 506, 516 (1974)
43. *Wheeler v. St. Joseph Hospital*
44. *ALLIED-BRUCE TERMINIX COMPANIES, INC., et al. v. G. Michael DOBSON, Wanda C. Dobson, Steven Gwin, and Jan Gwin.* (1995)

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԳՈՐԾԵՐ

45. *Դե Կուբերն ընդդեմ Բելգիայի*, գործ no. 9186/80 (ՄԻԵԴ, 26 հոկտեմբերի 1984)
46. *Հաուշիլդն ընդդեմ Դանիայի*, գործ no. 10486/83 (ՄԻԵԴ, 26 հոկտեմբերի 1989)
47. *Պադովանին ընդդեմ Իտալիայի* գործ (no. 13396/87, (ՄԻԵԴ, 26 փետրվարի

1993)

48. Պիեթրասակն ընդդեմ Բելգիայի գործ no. 8692/79. (ՄԻԵԴ, 1 հոկտեմբերի, 1982)
49. Սալուվն ընդդեմ Ուկրաինայի, գործ .65518/01, (ՄԻԵԴ, 06 դեկտեմբերի, 2005),
50. Վոլկովն ընդդեմ Ուկրաինայի, գործ no.21722/11 (ՄԻԵԴ, 27 մայիսի 2013)
51. *Ettl v. Austria*, no. 12/1985/98/146 (ECtHR, 24 March 1987)
52. *Hornsby v. Greece*, no. 18357/91 (ECtHR, 19 March 1997)
53. *H. v. Belgium*, no. 8950/80 (ECtHR, 30 November 1987)
54. *Sramek v. Austria*, no. 8790/79 (ECtHR, 22 October 1984)

ԳՐՔԵՐ, ՀՈՂՎԱԾՆԵՐ

55. Ali F. Shahal (2013) Consumer Financial Dispute Resolution in a Comparative Content, Cambridge University Press
56. Andrea M. Steingruber (2012), Consent in International Arbitration, Oxford University Press
57. Christian Konrad, Philipp Peters; Konrad & Partners, (06 Dec., 2012) Arbitration: the method of choice in construction? CDR (Commercial Dispute resolution), Published by Global Legal Group
58. Collins, D. A. (2008). Compulsory Arbitration Clauses in Domestic and International Consumer Contracts. King's Law Journal, 19(2)
59. Deborah R. Hensler (1990), Court-ordered arbitration: an alternative view. Rand Corporation
60. Folberg, J., Golann, D., Stipanowich, T.J., Kloppenberg, L. A, (2010). Resolving Disputes. Theory, Practice, and Law. New York: Aspen Publishers
61. Gary Born (2009), International Commercial Arbitration, Volume 1, Kluwer Law International, The Netherlands
62. Grant Hanessian, Lawrence W. Newman (2009), International Arbitration Checklists. Baker & McKenzie, 2nd edition
63. Hamline J. Pub. L. & Pol'y 293, 317 (2003); Sternlight, Panacea, supra note 15, at 695; Drahozal & Friel, Consumer Arbitration
64. Henry Gabriel & Anjanette H. Raymond, (2005); Ethics for Commercial Arbitrators; Wyoming Law Review, University of Wyoming 453(5)
65. Jean R. Sternlight (2001), Mandatory Binding Arbitration and the Demise of the Seventh Amendment Right to a Jury Trial, 16 Ohio St. J. on Disp. Resol.
66. Joanna Harrington (2001), To Litigate or Arbitrate-No Matter-The Credit Card Industry Is Deciding for You, 2001, J. Disp. Resol.
67. Joseph F. Morrissey and Jack M. Graves (2013), International Sales Law and Arbitration, Kluwer Law International BV, The Netherlands
68. Joshua Karton (2013), The Culture of International Arbitration and the Evolution of Contract Law, OXFORD, UK
69. Julian D. M. Lew, Loukas A. Mistelis, Stefan Kröll (2003), Comparative International Commercial Arbitration, Kluwer Law International
70. Leigh Duthie, Alex Wolff, Mia Livingstone, Australian arbitral institutions: The Baker & McKenzie International Arbitration yearbook 2012-2013: Juris
71. Mark E. Appel, Senior Vice President, ICDR. Taking Your Case to the International Center for Dispute Resolution
72. Martin F. Gusy, James M. Hosking, Franz T. Schwarz (2011), A Guide to the ICDR International Arbitration Rules
73. Disco, Matthew David, (Nov. 1993): The Impression of Possible Bias: What a Neutral Arbitrator Must Disclose in California. Hastings Law Journal 45, no. 1
74. Nicola Dunleavy & Gearóid Carey, Guide To International Arbitration 2013 - 10th

- Edition: Ireland (22 August, 2013)
75. Radka Zahradnikova, Challenge procedure in Institutional and Ad Hoc Arbitration under the New Regulation in the Revised UNICITRAL Arbitration Rules. Czech (& Central European) Yearbook of Arbitration
 76. Richard Kreindler, Dr Anna G. Tevini, Alexander Dolgorukow (Feb. 2012), Arbitration Guide, Germany
 77. Sarah E. Larson, An Examination of the Broad Scope of the Federal Arbitration Act and Binding Mandatory Consumer Agreements: Not the Answer to Racial Bias in the United States Legal System
 78. Saurendra Rautray (30 Nov., 2012), Law Of And Procedure For Appointment Of Arbitrator(s): India
 79. Senator Russel D. Feingold (2002), Policy Essay. Mandatory Arbitration: What Process Is Due? Harvard Journal on Legislation, Vol. 39
 80. Sternlight, U.S. Out on a Limb
 81. Tiffany Huang and Amber Hsu. Taiwan cases; The Baker and McKenzie International Arbitration Yearbook 2012-2013; Juris, New York
 82. Thomas, S. B. (2006). International Arbitration: A Historical Perspective and Practice Guide Connecting Four Emerging World Cultures: China, Mexico, Nigeria and Saudi Arabia. (H. Smit, Ed.) The American Review of International Arbitration, 17 (2)
 83. Zaven A. Sargsyan (August 2013), A Practical Guide to International Commercial Arbitration in the Post-Soviet States: Republic of Armenia. JEL 2012 Vol. 5, No. 3

